# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

# <<ՀԱՌԻՃԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

# 2023-2028ԹԹ



# Զարգացման ծրագրի բովանդակությունը

Նախաբան

1. Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմեր

1.1 Հաստատության շենքային պայմաններ

1.2 Հաստատության նյութատեխնիկական բազան

1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն

1.4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

1.5 Հաստատության ուսումնական միջավայրը

1.6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

1.7 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը

1.8 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

1.9 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

1.10 Աշ խատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

2. Նպատակների խնդիրների սահմանում

3. ՈՒսումնական հաստատության գործունեություն

ա/ Ինչ կրթական կարիքներ է բավարարում

բ/ Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին

գ/ Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին հնարավորություններին

4. 5. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ, միջոցառումներ և պատասխանատուներ

6. ՈՒսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշներ

7. Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղված գործողություններ

8. ՈՒսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները նյութատեխնիկական բազան

9. ՈՒսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները

# Նախաբան

<<Հառիճի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի  2023-2028 զարգացման ծրագիրը կազմվել է Հայաստանի Հանրապետության <<Սահմանադրության>>, <<Կրթության մասին>>, <<Հանրակրթության մասին>>, << Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>>, << Երեխայի իրավունքների մասին >> , ՀՀ օրենք <<Լեզվի մասին>>, << Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին >> ՀՀ օրենքներով այլ օրենքներով և դրանից բխող այլ ենթաօրենսդրական ակտերով, <<Ուսումնական հաստատության կանոնադրության կետերի իրավական հիմքերով և  ՀՀ ԿԳՄՍ  նախարարի 22.09.2022թ << Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափի և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողականի ցուցանիշներն ու պահանջները հաստատելու  >> մասին հրաման N 35-Ն պահանջներին համապատասխան, հաշվի առնելով մանկավարժական կոլեկտիվի ձեռք բերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները:

Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է :

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքը ազգային դպրոցն է , որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող  և համակողմանիորեն զարգացած,  հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Կրթությունը անձի , հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն:

Հայաստանի Հանրապետության  կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

**<< Հառիճի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում/ գրանցման համար՝ 53. 210.00418/**

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով տրված լիցենզիաների ՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը

- Տարրական ընդհանուր կրթություն I աստիճան՝ **- լիցենզիա Ա N 0539/52 տեղ/**
- Հիմնական ընդհանուր կրթություն II աստիճան՝ **- լիցենզիա Ա N 0528/73տեղ/**
- Միջնակարգ ընդհանուր կրթություն I II աստիճան **- լիցենզիա Ա N 0431/45տեղ/**
- Տնային ուսուցում **- լիցենզիա Ա N 0431**

Հառիճի միջնակարգ դպրոցն ունի ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված պարտադիր առկայության և գործածության ենթակա բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Դրանք վարվում են կարգերին պահանջներին համապատասխան

1.Պետական գրանցման վկայական

2. Դպրոցի կանոնադրություն

3. Լիցենզիա՝ ըստ կրթական ծրագրերի աստիճանի և սահմանային տեղերի

4. Դպրոցի զարգացման ծրագիր

5. Առարկայական ծրագրեր

6. Ներքին կարգապահական կանոններ

7. Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան

8. Հաշվետվություն դպրոցի ամենամյա գործունեության մասին

9. Դպրոցի շենքի սեփականության վկայական

10. Սովորողների շարժի մատյան

11.Սովորողների անձնական գործ

12. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան

13. Աշխատողների հրամանագիրք

14. Աշակերտների հրամանագիրք

15. Աշխատողի անձնական գործ

16. Դպրոցի մանկավարժական, առարկայական մեթոդական միավորումների, ծնողական, աշակերտական խորհուրդների արձանագրությունների մատյաններ

17.Դպրոցի ամենամյա եկամուտների և ծախսերի նախահաշիվ

18.Հաստիքացուցակ

19.Տարիֆիկացիոն ցուցակ

20.Ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան

Վերոնշյալ փաստաթղթերը լրացվում են համաձայն խորհրդակցական մարմինների, մանկավարժական խորհրդի, աշակերտական խորհրդի, առարկայական մեթոդմիավորումների օրինակելի կանոնադրությունների հիման վրա մշակված կանոնադրությունների, որտեղ նկարագրվում է յուրաքանչյուր փաստաթղթի վարման գործընթացը և նշվում պատասխանատու անձը:

Դպրոցը 1 հարկանի քարե շինություն է : Օգտագործվում է ամբողջությամբ:Դպրոցը հիմնադրվել է 1994թ: Նախատեսված է 195 աշակերտների համար:

Այնտեղ գործում են՝

1. 12 դասասենյակներ -300մ$^2$,
2. տնօրենի կաբինետ- 15մ$^2$,
3. ուսուցչանոց 1 -30մ$^2$,
4. լաբորատորիա 1- 40.0մ$^2$,
5. սանհանգույցներ 4 -16մ$^2$,
6. մարզադահլիճ 1 - 128մ$^2$,
7. ճաշարան 1- 20մ$^2$,
8. հանդերձարան 2 -40 մ$^2$:
9. շախմատի դասարան 1 -29 մ$^2$,
10. համակարգչային 1 սենյակ -57 մ$^2$,
11. հաշվապահություն 1 -18 մ$^2$,
12. լաբորատորիա 1 -25 մ$^2$,
13. Գրադարան 1 -18 մ$^2$
14. ՆԶՊ կաբինետ 1 -24 մ$^2$
15. Պահոց 1 - 15 մ$^2$
16. Արհեստանոց 1- 30 մ$^2$

Դպրոցում առկա է բացօթյա մարզահրապարակ, ջեռուցման անհատական համակարգ, մշտական ջրամատակարարում, ինտերնետ կապ, անխափան հոսանք:

2023-2024 ուսումնական տարվա կոմպլեկտավորման տվյալներով աշակերտների թիվը կազմում է 132 աշակերտ:

<< Հառիճի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը գտնվում է ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Հառիճ, 6փողոց, շենք 7 հասցեում:

Դպրոցն իրականացնում է ներառական կրթություն/ տնային ուսուցում 1 աշակերտ/՝ ուսուցչի օգնականի և 3 աջակցող մասնագետների հոգածությամբ:

Դպրոցում աշխատում են 24 մանկավարժներ, որոնցից 22-ը ունեն բարձրագույն կրթություն, 2-ը միջին մասնագիտական, որոնք դիմել են կամավոր ատեստավորման, ցավոք չեն հաղթահարել:

Կանոնադրության համաձայն դպրոցում գործում են `

1. Կառավարման խորհուրդ

2. Մանկավարժական խորհուրդ

3. Ծնողական խորհուրդ

4Աշակերտական խորհուրդ

Բոլոր խորհուրդներն ունեն իրենց կանոնադրությունները, որոնք կազմում է դպրոցը, հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Խորհուրդները գործում են անկախ, կանոնավոր գումարում նիստեր և կազմակերպում իրենց աշխատանքները, նպաստելով դպրոցի ուսումնադաստիարակչական և կառավարման գործընթացին:

Դպրոցում գործում է երեք առարկայական մեթոդական միավորումներ, որոնք են՝ տարրական, հումանիտար և բնագիտական: Խորհրդակցական մարմինների գործունեությունը շատ կարևոր է դպրոցի համար :

Աշխատանքային պլանը, ուսումնադաստիարակչական պլանը և դասաբաշխումը հավանության են արժանանում մանկավարժական խորհրդի կողմից:

Դպրոցը համագործակցում է կրթության կառավարման լիազոր մարմինների, ԿԶՆԱԿ-ի, <<ԹՈՒՄՈ>> կազմակերպությունների հետ: Համայնքապետարանի հետ համագործակցելով կատարվել է շենքի մասնակի վերանորոգում:

Սովորողին ուսուցման անձնական մասնագիտական զարգացման անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրելու համար պետք է ապահովել ուսումնական միջավայր, որը հնարավորությունների գործընթացների և սոցիալական փոխազդեցության համակարգ է: Շատ կարևոր է ունենալ հարմարավետ, հրապուրիչ, տրամադրող, մոտիվացնող ուսումնական միջավայր:

Դպրոցում չպետք է լինեն բուլինգի դեպքեր: Ծնողները և երեխաները պետք է համոզված լինեն, որ դպրոցում իրենք պաշտպանված են և դպրոցում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: Պետք է մշտապես հոգ տանել սովորողների առողջության

պահպանման համար: Վերահսկել բացակայությունները, պահպանել համաճարակային կանոնները

Ուսուցիչները մասնակցել են հերթական ատեստավորմանը, աջակցող կազմակերպությունների կողմից կատարվող վերապատրաստումներին և այլ դասընթացների, որոնք ուղղված էին նոր չափորոշիչների ներդրման գործընթացին: Դպրոցի ուսումնական համակազմը համալրվում է ուսուցչի թափուր տեղի համար հայտարարվող մրցույթով, ըստ կրթության կառավարման լիազոր մարմնի սահմանված կարգի:

Դպրոցի նպատակը պետք է լինի մանկավարժական համակազմի և ուսումնաօժանդակ աշխատակիցների պարբերական համալրում բարձր որակավորում ունեցող կադրերով:

## Իրավիճակի վերլուծություն , ուժեղ և թույլ կողմեր

| 1.1 Հաստատության շենքային պայմաններ | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| **Դպրոցը** հիմնադրվել է 1994թ:<br>Շենքի ընդհանուր մակերեսը՝ 931 քառ.մ<br>Շենքի մաքրվող մակերես՝ 720.5քառ.մ<br>**Դպրոցին** կից հողամաս՝ 300քառ.մ<br>**2010** թվականին վերանորոգվել է<br>**2017թ** մարզադահլիճի կառուցման ծրագիրն իրականացվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից:<br>**Դպրոցի** շենքը տիպային է, 1 հարկանի քարե շինություն,օգտագործվում է ամբողջությամբ:<br>**Ունի լուսավոր** , ընդարձակ շենքային պայմաններ, 12 դասասենյակ , 1 համակարգչային սենյակ ,1 ՆԶՊ կաբինետ , 1 արհեստանոց, 1 պահեստ, տնօրենի աշխատասենյակ:<br>**Ունի** սպորտհրապարակ , մարզադահլիճ՝ ապահովված 2 հանդերձարաններով՝ նախատեսված տղաների և աղջիկների համար, մարզիչի /ուսուցիչ/ սենյակ, ունի 2-րդ ելք, ներքին հրդեհաշիջման ցանց:<br>**Դպրոցն** ունի էլեկտրական վահանակի անկյուն, պահեստային սենյակ:<br>**Դպրոցն** ապահովված է լոկալ/գազի/ ջեռուցման համակարգով, տարահանման ելքերով:<br>**Տարածքն** առանձնացված է ցանկապատով, կանաչապապատ է:<br>**Դպրոցն** ունի 4 սանհանգույց , որից գործում են 2-ը:<br>**Դպրոցական** շենքի պայմանները համապատասխանում են անվտանգ շահագործման նարմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը:<br>**Դպրոցի** դռները, պատուհանները փոխված են:<br>**Դպրոցի** տանիքը վերանորոգված է :<br>**Դպրոցն** ունի շուրջօրյա ջրամատակարարում | **Դպրոցը կարիք ունի՝**<br><br>• Ներքին հարդարման<br>• Դպրոցի բակի կանաչապատման<br>• Ապաստարանի<br>• Կոյուղագծերի անցկացման<br>• Միջանցքի սալիկապատման<br>• Դասասենյակների հատակի նորոգման<br>• Տիպային ճաշարան,խոհանոց<br>• Հանդիսությունների դահլիճ<br>• Սանհանգույցների նորոգում<br>• Մարզադահլիճի և մարզադաշտ ի չափերը չի համապատասխանում նորմերին |

| 1.2 Հաստատության նյութատեխնիկական բազան | |
|---|---|
| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| Հաստատությունն ունի 4 համակարգիչ, 1 պրոյեկտոր, 2 բազմաֆունկցիոնալ սարք:<br>Դպրոցում գործում է <<Արմաթ>> լաբորատորիա 8 համակարգիրներով, WI-FI սարք -1 հատ, աշակերտական սեղան, աթոռներ /հնամաշ /, 4 գրապահարան, 2 աշխատասեղան, 2 չիրկիզվող պահարան:<br>Գործում է գրադարան, առկա է բոլոր աշակերտների համար նախատեսված դասագրքեր: Առկա են քիչ քանակությամբ որոշ առարկաների <<Կենսաբանություն>>, <<Երկրաչափություն>>, <<Հանրահաշիվ>>,<<Աշխարհագրություն>> համար նախատեսված պաստառներ: | **Դպրոցը կարիք ունի՝**<br><br>• Համակարգիչների, նոութբուքերի, պրոյեկտորի, բազմաֆունկցիոնալ տպիչի<br>• Ուսումնական նյութեր, դիդակտիկ պարագաներ, անհրաժեշտ մեթոդական գրականության<br>• Գրադարան՝ գեղարվեստական գրականությամբ և ուսումնական նյութերով հագեցվածության |

| | |
|---|---|
| Առկա է շախմատի դասասենյակը 35մ մակերեսով համապատասխան սեղաններ, խաղադաշտ և խաղաքարեր: Գործում է մարզադաշտ և մարզադահլիճ: Դպրոցում առկա է 80 սեղաններ, | • Գրապահարաններ, աշխատասեղաններ , համակարգչային սեղաններ, աշակերտական սեղան աթոռներ , կախիչներ՝ զգեստների համար նախատեսված<br>• Լաբորատոր նյութերի, սարքավորումների, լաբորատորիայում շուրջօրյա ջրամատակարարման, անվտանգություն ապահովող սարքավորումների<br>• Առարկայական կաբինետների ձևավորման<br>• Մարզագույքի<br>• Խոհանոցային գույքի<br>• Դպրոցում չկա ընթերցասրահ |

## 1.3 Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները

| **Կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների դերը դպրոցի կառավարման մեջ կարևոր է , նրանց համատեղ գործունեության արդյունքում դպրոցի կառավարումը դառնում է ավելի արդյունավետ, տեսանելի և մասնակցային** | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| **Դպրոցն ունի** կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ , ծնողական խորհուրդ և աշակերտական խորհուրդ, որոնք կատարում են իրենց վերապահված գործառույթները:<br>**Դպրոցն ունի** 2 առարկայական մասնախմբեր, որոնք ամիսը մեկ անգամ գումարում են նիստեր, կազմակերպում ուսումնադաստիարակչական աշխատանքներ:<br>**Դպրոցն ունի** կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ/ Նախապետավանի միջնակարգ դպրոց , Հառիճի միջնակարգ դպրոց, Մեղրաշենի միջնակարգ դպրոց/ իրականացնում են ընթացիկ վերահսկողություն: Խորհուրդը գործում է դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Նրա գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը: Խորհուրդը շահագրգռված է դպրոցի առաջընթացի հարցում , պատրաստակամ է աջակցելու բոլոր նախաձեռնություններին: Պատասխանատու են վերաբերվում իրենց վերապահված պարտավորություններին :<br>Խորհրդի անդամների քանակի շատ լինելը նպաստում է վերահսկողության բարձրացմանը , քանի որ տնօրենի հաշվետվությունը լսելի է դառնում նաև մյուս երկու դպրոցների համար: Տարին առնվազն երկու անգամ տեղի են ունենում կառավարման խորհրդի նիստեր, որտեղ քննարկվում են միջնաժամկետ ծրագրի կատարողականը , տարիֆիկացիոն ցուցակը | • Դպրոցը չունի հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդ<br>• Տնօրենի ընտրության կարգի փոփոխությունը բերել է միացյալ խորհրդի ակտիվության համագործակցության նվազման<br>• Միացյալ խորհրդի անդամների առնվազն կեսը ակտիվ չեն լինում, քանի որ քննարկվող հարցը իրենց դպրոցին չի վերաբերվում<br>• Ուսուցիչների մեծ մասը դժվարանում են ՏՀS օգտվելիս<br>• Միջին մասնագիտական որակավորում ունեցող մանկավարժներ<br>• Կամավոր ատեստավորման, տարակարգի ցածր մասնակցություն<br>• Հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվող սեմինարներին |

| | |
|---|---|
| և տեղեկագիրը: Դպրոցի եռամսյակային հաշվետվությունները, տարեկան նախահաշիվը քննարկվում , իսկ բյուջեի նախագիծը լրամշակվում է խորհրդի կողմից: Հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայք էջում և տեղադրվում հայտերի անկյունում: Խորհրդի վերահսկումը տնօրենի գործունեությունը դարձնում է ավելի արդյունավետ , թափանցիկ:<br>**Մանկավարժական խորհուրդը** համալրված է փորձառու և որակյալ մասնագետներով: Խորհուրդը ձևավորված է 24 մանկավարժներից, որից 22-ը ունեն բարձրագույն մասնագիտական որակավորում, 2-ը միջին մասնագիտական որակավորում: 4ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորման , 2-ը հաղթահարել :Պարտադիր ատեստավորում անցած 24 ուսուցիչներ: Յուրաքանչյուր տարի օգոստոսյան առաջին նիստին սահմանված կարգով ձևավորվել է հաստատության մանկավարժական խորհուրդը՝ մեկ ուսումնական տարի ժամկետով , ընտրվել մանկավարժական խորհրդի նիստերի մշտական քարտուղար և հաստատել իր աշխատակարգը: Ժամանակի պահանջներին համահունչ ՝ վերափոխվել է հաստատության մանկավարժական համակազմը, համալրվել երիտասարդ և արհեստավարժ մասնագետներով: Աշխատանքային պլանը, ուսումնադաստիարակչական պլանը և դասաբաշխումը հավանության են արժանանում մանկավարժական խորհրդի կողմից:<br>**Աշակերտական խորհուրդ** գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Աշակերտները բավական կազմակերպված են, ակտիվ, ազատ իրենց մտքերն ու կարծիքներն արտահայտելիս: Հետաքրքված են մշակույթով և հոգևոր արժեքներով՝ պատրաստակամ ցանկացած նախաձեռնության համար: Ակտիվորեն մասնակցում են դպրոցի կյանքին, շատ անգամ դառնում միջոցառումների հեղինակ, մասնակցում հանրօգուտ աշխատանքների: Հետաքրքված են նորարարական ծրագրերով: Աշակերտական խորհրդի ներկայացուցիչը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է խորհրդի և մանկավարժական խորհրդի այն նիստերին , որտեղ քննարկվում են անմիջապես աշակերտներին վերաբերող հարցեր:<br>Ծնողական խորհուրդը պատրաստակամ է աջակցելու դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին:Ծնողական խորհուրդը դասարանական ծնող խորհուրդների աջակցությամբ կազմակերպում է էքսկուրսիաներ և այլ միջոցառումներ:<br>Առկա է արձանագրությունների մատյաններ | մասնակցության պասիվություն<br>• Աշակերտական խորհրդի դերը չի կարևորվում: Չեն իրագործվում սովորողների նախաձեռնությունները<br>• Արձանագրությունների մատյաններում առկա է նիստերի բաց թողնված արձանագրություններ |

## 1.4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Դպրոցը կրթական գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության : Դպրոցն համագործակցում է՝ ՀՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության, Շիրակի մարզպետարանի, Արթիկի համայնքապետարանի, Հառիճ վարչական կենտրոնի, Արթիկի ՏՄԱԿ-ի, ՀՄԿ-ի, ԿՁՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ուսուցիչների վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների, ՀՀառողջապահության նախարարության, ԱԻՆ-ի, ՊՆ-ի, իրավապահ մարմինների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, մասնագիտացված ուսումնական հաստատությունների, <<Հառիճի արվեստի դպրոց>> ՊՈԱԿ-ի, Արթիկ համայնքի արվեստի և սպորտ դպրոցների հետ, <<Մասնակցային դպրոց>>, <<Ինտերակտիվ կրթության զարգացում>>, <<Ձևափոխվող կրթություն>> հիմնադրամների, մանկապարտեզի: Պահպանվում է դպրոց-ընտանիք կապը/դասղեկների կատարած աշխատանքների շնորհիվ/: Փոքր բնակավայր է, լինում են հաճախակի այցելություններ դպրոց: Առավել ակտիվ են ծնողները ժողովներին, դպրոցական միջոցառումներին :<br>Կա համագործակցություն կրթություն թերթի խմբագրության հետ՝ ուսուցչի թափուր տեղի մրցույթի հայտարարության տեսքով/տարեկան առնվազն 2 անգամ:<br>Հաստատությունը Արթիկ խոշորացված համայնքի դպրոցներից մեկն է հանդիսանում և հնարավորության դեպքում մասնակցում է համայնքում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների/կամ հրավիրված կամ մասնակից:<br>Աշխատանքներ են տարվում երկարօրյա խմբերի ձևավորման և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման գործում:<br>Սովորողների ուսումնառության և ժամանցի կազմակերպման ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման համար ստեղծծվել են խմբակներ՝ ուսուցչի կամ ծնողների առաջարկությամբ մանկավարժական խորհրդի նիստում հավանության արժանանալու դեպքում<br>Աշակերտներից 5-ը մասնակցել են համայնքապետարանի ենթակայությամբ գործող արտադպրոցական խմբակներին, ստացել շնորհալակագրեր:<br>Մշտապես մասնակցում է համայնքի կողմից կազմակերպված միջոցառումներին մասնավորապես շաբաթօրյակներ, մրցույթներ:<br>Անհրաժեշտություն կա խորացնել համագործակցությունը ծնողների հետ՝ կապված նոր չափորոշիչով երկարօրյա ուսուցման կազմակերպման հետ առնչվող հարցերով<br>Ծնողական խորհուրդն ու ծնողները զգալի ներդրում ունեն սովորողների կրթության և դաստիարակության գործում:<br>Երբեմն ծնողական համայնքի միջոցով կազմակերպվում է հետաքրքրաշարժ և նպատակային միջոցառումներ: | • Բնապահպանական ԾԻԳ-երի հետ համագործակցության բացակայություն<br>• Կրթական տարբեր հիմնադրամների հետ համագործակցության պասիվություն<br>• Բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցության բացակայություն<br>• Հարակից դպրոցների հետ կապի բարելավում<br>• Վարչական կենտրոնը ունենալով սահմանափակ իրավունքներ դպրոցի կառավարման գործում կատարում է ավելի շատ խորհրդատվական գործառույթ, քան կառավարման<br>• Խմբակների, թատրոնների , համերգների բացակայությունը ծնողներին չի մոտիվացնում , ապրելով գյուղում իրենց երեխաներին ուղղորդել դեպի հարազատ դպրոց<br>• Դպրոցի շրջանավարտների հետ համագործակցության պակաս<br>• Դպրոցի բյուջեի սուղ միջոցների պատճառով կրթություն թերթի բաժանորդագրություն չի իրականացվում<br>• Ծնողական համայնքը չունի բավարար նախաձեռնողականություն, աշխատանքները կատարվում են մանկավարժական համակազմի կողմից |

| | |
|---|---|
| Ծնողական համայնքը մասնակցում է ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական աջակցություն ցուցաբերելու աշխատանքներին, աջակցում դպրոցի ԿԱՊԿ ունեցող սովորողի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում: | |

## 1.5 Հաստատության ուսումնական միջավայրը

Ուսումնական միջավայրը կրթության կարևորագույն բաղադրիչներից մեկն է , որը նպաստում է ոչ միայն կրթության որակի բարձրացմանը, այլև սովորողի առողջության պահպանմանը և ֆիզիկական զարգացմանը

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Հաստատությունն ունի շենքային բավարար պայմաններ /ջեռուցման լոկալ համակարգ, շուրջօրյա ջրամատակարարում, դասասենյակներ , գրադարան , լաբորատորիա, համակարգչային սենյակ, ինտերնետ կապի առկայություն/ , ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար՝ ապահովելով օրենսդրությամբ սահմանված պայմաններ, որի շնորհիվ դպրոցի աշակերտական կազմը տարեց տարի համալրվում է | • Գեղեցիկ և ժամանակակից կահավորված միջանցքների բացակայություն<br>• Դպրոցի տարածքը ասֆալտապատ չէ<br>• ԿԱՊԿ ունեցող երեխաների համար խելամիտ հարմարեցումների բացակայություն<br>• Գրադարանը ապահովված չէ գեղարվեստական , մեթոդական գրականությամբ<br>• Ժամանակակից էլեկտրոնային գրադարանի և տիպային լաբորատորիաների բացակայություն<br>• Առարկայական կաբինետների բացակայություն<br>• Համակարգչային կաբինետների հագեցվածության պակաս<br>• Ազգային երգ ու պարի ուսուցում<br>• Թատերական խմբակի և երգչախմբի ստեղծում<br>• Համագործակցություն այլ դպրոցի նույն տարիքի սովորողների հետ մրցույթների , բանավեճերի, քննարկումների միջոցով<br>• Արևային էներգիայի համակարգի ձեռք բերում |

## 1.6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացում ապահովող միջոցառումներ

ՀՀ թևակոխել է կրթության բովանդակային բարեփոխումների նոր փուլ: Փոփոխվել է նաև Հանրակրթության պետական չափորոշիչը/ՀՊՉ/, որը հիմնված է սովորողների հմտությունների և կարողունակությունների վրա: Կրթական քաղաքականությունը մեծացնում է ուսուցիչների պատասխանատվությունը: Այսօր ուսումնադաստիարակչական գործունեության կենտրոնական դեմքը ուսուցիչը կարիք ունի իր կարողունակությունների հարստացման, որպեսզի կարողանա սովորողի մոտ ձևավորել գիտելիք, հմտություն, դիրքորոշում և արժեքային համակարգ:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Դպրոցում աշխատում են 24 ուսուցիչներ, որոնցից երկուսը միջին մասնագիտական որակավորմամբ: 24 ուսուցիչներն էլ դասավանդում են համապատասխան առարկաներ՝ ըստ ստացած որակավորման: 1 հոգեբան, 1 ուսուցչի օգնական: Միջին մասնագիտական որակավորման 2 ուսուցիչներն էլ դիմել էին կամավոր ատեստավորման,ցավոք չեն հաղթահարել անցողիկ շեմը: Ուսուցիչների մասնագիտական որակների զարգացումն են ապահովում հաստատությունում և վերապատրաստող կազմակերպություններում պարբերաբար կազմակերպվող տարատեսակ միջոցառումները, դասընթացները, խորհրդատվություններն ու խորհրդակցությունները:<br>Ուսուցիչների մի մասը դասապրոցեսին կիրառում են նոր տեխնոլոգիաներ:<br>Բազմավաստակ ուսուցիչների բարեխիղճ աշխատանքի պատրաստակամություն<br>Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի առկայություն<br>Ուսուցիչների փոխհամագործակցություն , սկսնակ ուսուցիչներին օգնություն<br>Բաց դասերի անցկացում<br>Դպրոցը ուսումնադաստիարակչական հարցերում փորձում է ապահովել աշակերտակենտրոն մոտեցում<br>Դպրոցում աշխատող բոլոր ուսուցիչները մասնակցել են ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպած 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններում ներդրված ՀՊՉ դասընթացներին և բարեհաջող ավարտել:<br>Օգոստոս ամսին պարտադիր ատեստացիա անցել են 6 ուսուցիչներ: 4 ուսուցիչներ դիմել են կամավոր ատեստավորման, որից 2- ը հաղթահարել են անցողիկ շեմը: | • Տարակարգի և կամավոր ատեստավորմանը մասնակցելու պասիվություն<br>• Ուսուցիչները խուսափում են ԿԳՄՍՆ կողմից կազմակերպվող << Տարվա լավագույններ >> մրցույթին մասնակցելուց<br>• Դասապրոցեսին ՏՀՏ կիրառման պակաս<br>• Այլ ուսումնական հաստատությունների մանկավարժների հետ փորձի փոխանակման պակաս<br>• Ոչ բոլոր ուսուցիչներն են զբաղվում ինքնակրթությամբ<br>• Ուսուցչի խրախուսման սահմանափակ հնարավորություններ/դպրոցի սուղ միջոցներ/<br>• Որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումներին մասնակցելու մոտիվացիայի պակաս<br>• Ուսուցիչները դեռևս դժվարանում են նոր ՀՊՉ-ին և նրանից բխող մեթոդական և ծրագրային փոփոխություններին<br>• Թեև առարկաների դասավանդման համար ուս.պլանի ժամաքանակները բավարար են առարկայի յուրացման համար, սակայն սովորողները շարունակում են հաճախել կրկնուսույցի պարապմունքների<br>• Որակավորված մանկավարժների սակավություն |

## 1.7 Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| --- | --- |
| Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ կազմակերպվել է արդյունավետ ուսումնառություն: Հաստատության աշխատակիցների կողմից դպրոցի տեղեկատվական բազայի մուտքագրում համակարգչայնացումը նպաստել է հաստատության գործունեության նորացմանը: Աշակերտների ուսումնադաստիարակչական գործունեությունը /դասացուցակ, ուսումնական պլան, թեմատիկ պլան, խմբակների գործունեություն, գնահատականներ և այլն / իրականացվում են էլեկտրոնային եղանակով, վարվում է համապատասխան ուսուցիչների կողմից և ստուգվում է տնօրենի, տնօրենի տեղակալի, մեթոդ միավորումների նախագահների կողմից<br><<Ինֆորմատիկա>> առարկայի դասաժամերը անցնում են համակարգչային դասարանում: Մնացած գրեթե բոլոր առարկաներից ամսական առնվազն մեկ դասաժամ ևս անց է կացվում համակարգչային դասարանում օգտագործելով ՏՀՏ գործիքներ, ապահովելով համագործակցությունը սովորողների և ուսուցիչների միջև:<br>Դպրոցն ունի 1 համակարգչային դասասենյակ, 1 շարժական պրոյեկտոր, 1 նոութբուք, 5 համակարգիչ, տարբեր հզորություններով: : Ինտերնետի օգտագործումը հնարավորություն է տալիս ոչ միայն աշակերտներին, այլև ուսուցիչներին օգտվել տարբեր էլեկտրոնային կրթական հարթակներից, անհրաժեշտ ռեսուրսներից՝ մասնագիտորեն  կատարելագործվելու , դասն ավելի հագեցած ու բովանդակալից անցկացնելու համար:<br>Դպրոցն ունի դպրոցական կայք, ֆեյսբուքյան էջ, որտեղ արտացոլվում է դպրոցի ամբողջ գործունեությունը:<br>Դպրոցի հաշվապահական գործընթացը իրականացվում է ՀԾ ծրագրի միջոցով:<br>Աշակերտների ուսումնական գործընթացները գրանցված են էլեկտրոնային դասարաններում, վարվում են համապատասխան ուսուցիչների և դասղեկների կողմից, ստուգվում են տնօրենի, տնօրենի տեղակալի , մեթոդ միավորումների նախագահների կողմից»<br><<Արմաթ >> լաբորատորիան ակտիվորեն գործում է՝ ներգրավվելով բազմաթիվ աշակերտների: 2022թ մասնակցել են եռաչափ մոդելավորման մրցույթին և արժանացել խրախուսական մրցանակի՝ որպես ամենագեղեցիկ աշխատանք և ստացել հրավեր մասնակցելու Դիջիթեք 2022 ցուցահանդեսին /Հարությունյան Հասմիկ,  Ղազարյան Նարե/:<br>2023թ միանգամից երեք աշխատանքով մասնակցել ցուցահանդեսին և ունեցել ամենաակտիվ տաղավարը:/Սահակյան Գառնիկ, Մանուկյան Սյուզաննա, Նարե Ղազարյան /: 2023թ մասնակցել Դիջիկոդ մարզային փուլին և լաբորատորիա անվանակարգում միջին տարիքային խմբում գրավել առաջին տեղը:<br>Երեխաները հաճախում են <<Թումո>> կենտրոն: | • Արտադպրոցական ծրագրերին մասնակցության պասիվություն<br>• Համակարգչային սենյակի անբավարար հագեցվածություն<br>• Աշխատակիցների կողմից զարգացող ՏՏ տիրապետման ոչ բավարար մակարդակ |

## 1.8 Չափորոշչի պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Հանրակրթության ոլորտում հիմնական գերակայությունը սովորողների ուսման որակի բարձրացումն է , որի նախապայմանն է ուսումնական հաստատությունների կողմից կրթական առաքելության գիտակցումը<br>**Դպրոցն ապահովում** է յուրաքանչյուր սովորողի կրթության ևդաստիարակության հավասար իրավունքը: Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակում ուշադրություն են դարձվում կրթական չափորոշիչների և ծրագրերի արմատավորման ուղղությամբ: Աշխատանք է կատարվել ուսման որակը բարելավելու , աշակերտների կարողությունների ուղղությամբ:Բոլոր ուսուցիչները ունեն առարկայական թեմատիկ պլաններ, դասարան են մտնում օրվա դասի պլանով, կատարում փոխադարձ դասալսումներ, քննարկումներ, վերլուծություններ: Օրվա դասի պլաններում սահմանված են դասի նպատակները, խնդիրները, վերջնարդյունքները: Գործում է ներդպրոցական վերահսկողություն: Առողջության պահպանման և անվտանգ կենսագործունեության , ռազմահայրենասիրական , հայրենասիրական  և բարոյական դաստիարակության ամրապնդելու ուղղությամբ աշխատանքներ են տարվել: Մանկավարժական անձնակազմը տիրապետում և կիրառում է տարբեր մեթոդներ: Շնորհիվ մանկավարժների կողմից կիրառվող փոխներգործուն մեթոդների և հնարների աշակերտները ստանում են բավարար գիտելիքներ՝ զարգացնելու կոմպետեցիաները, այն է՝ գիտելիք, հմտություն, քննադատական մտածողություն, արժեքային համակարգ:<br>Երեխաները սիրով այցելում են <<Հառիճի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի խմբակների, ստացել բազմաթիվ շնորհակալագրեր:<br>Որպես կրթության որակի ցուցանիշ պետք է նշել շրջանավարտների ընդունվելը բարձրագույն ուսումնական հաստատություններ:<br>Դպրոցում սովորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 1 աշակերտ, որի ուսուցումը կազմակերպվում է տնային ուսուցմամբ: Ուսուցիչները համագործակցելով ՏՄԱԿ-ի բազմամասնագիտական թիմի , ծնողների հետ , ըստ սահմանված կարգի և ժամանակացույցի իրականացնում են տնային ուսուցումը, ապահովելով սովորողի կրթություն ստանալու հավասար իրավունքը: Անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների ապահովման պարագայում ԿԱՊԿ ունեցող աշակերտի համար նպատակահարմար է ուսուցումը կազմակերպել դպրոցում: | • Կարողունակահեն կրթության կազմակերպման հմտությունների պակաս<br>• Նախագծային ուսուցում կազմակերպելու դժվարություններ<br>• Գնահատման բնութագրիչների կիրառման դժվարություններ<br>• Առարկայական օլիմպիադաների մասնակցության բացակայություն<br>• Մարզական միջոցառումների մասնակցության ցածր մակարդակ<br>• Դասարանական , արտադասարանական , արտադպրոցական բազմաթիվ միջոցառումների ու ծրագրերին մասնակցության պասիվություն<br>• Երկկազմ դասարանների առկայություն |

| | |
|---|---|
| Կրթության որակի գնահատումը սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը բնութագրող վերջնարդյունքն է , ըստ ձեռք բերված գիտելիքների և հմտությունների մակարդակի , ինչպես նաև դիրքորոշումների և արժեքների ձևավորման չափորոշչային պահանջներին համապատասխան :<br>Հանրակրթության պետական չափորոշիչով գնահատումը իրականացվում է **ամփոփիչ** գնահատում՝ 1-4 դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում բնութագրման միջոցով: 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից մինչև 12-րդ դասարանը ներառյալ  ամփոփիչ գնահատումը իրականացվում է միավորային գնահատման միջոցով: **Ձևավորող** գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում : **Բնութագրող** գնահատումն իրականացվում է 1-4-րդ դասարանների կիսամյակների և 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ավարտին: **Հայտորոշիչ** գնահատման նպատակն է բացահայտել սովորողի նախնական գիտելիքները , հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի , առարկայի , դասընթացի , նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Փուլի ընտրությունը թողնվում է ուսուցչի  հայեցողությանը: **Միավորային** գնահատում  կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ  կիսամյակից սկսած: ԿԱՊԿ ունեցող աշակերտների գնահատումը իրականացվում է ըստ ԱՈՒՊ-ի:<br>Կրթության որակը դպրոցում գնահատվում է հետևյալ չափանիշներով՝<br>• Ուսումնական գործընթացի առկա վիճակը/ աշակերտի կարիքին համապատասխան ուսուցման կազմակերպում<br>• Կրթական գործընթացի կատարողականը / մանկավարժական և վարչատնտեսական աշխատակիցների աշխատանքի կազմակերպման հատուկ պլանավորված մեխանիզմների առկայություն<br>• Կրթական գործընթացի արդյունավետությունը / հասարակական կարիքներին համապատասխան կրթության բոլոր մասնակիցների փոխգործակցություն<br>• Ուսումնադաստիարակչական միջոցառումների որակը/ դպրոցական միջոցառումների , խմբակների<br>• նախագծերի իրականացում և կարգապահության արմատավորում<br>Բուլինգի կանխարգելման հարցում ուսուցիչներն ունեն իրենց մեծ ազդեցությունն: Բաց դասերին, դասղեկի ժամերին պարբերաբար անդրադառնում են խնդրին, քննարկում երևույթը, բարձրաձայնում վատ ազդեցությունների մասին: | |

| | |
|---|---|
| Դպրոցում ձևավորվել և գործում են <<Առողջ ապրելակերպ>>, <<Մասնագիտական կողմնորոշում>>, <<Ընթերցանություն>>, <<Հայկական լեռնաշխարհ>>, <<Հայի բնօրրան>> խմբակներ, որի վերահսկողությունը իրականացնում է ՄԿԱ գծով տեղակալը:<br>Նախագծային աշխատանքներ կիրականացվեն 7-12-րդ դասարաններում, որի համար ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչից նախագծի համար տրամադրվում է տարիֆիկացված ժամաքանակ, նախագծի իրականացումը կվերահսկի դպրոցի տնօրենի ուսումնական աշխատանքների տնօրենի տեղակալը: Իրականացվելու է <<Բնության ազդեցությունը մարդու վրա>> թեմայով նախագծային աշխատանք:<br>Երկարօրյա ուսուցման աշխատանքները ընթացքի մեջ են: | |

| | Աշակերտ թիվ, դասարանների քանակ | | | | | | գերազանց | | | լավ | | որակ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Դաս. | 2020-2021թ | | 2021-2022 | | 2022-2023 | | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
| I | 13 | 1 | 18 | 1 | 13 | 1 | | | | | | | | | |
| II | 7 | 1 | 10 | 1 | 18 | 1 | 2 | 3 | 5 | 5 | 5 | 11 | 100% | 80% | 94.4% |
| III | 14 | 1 | 8 | 1 | 9 | 1 | 4 | 2 | 3 | 4 | 5 | 5 | 57.1% | 87.5% | 88.8% |
| IV | 14 | 1 | 14 | 1 | 8 | 1 | 3 | 4 | 2 | 5 | 4 | 5 | 57.1% | 57.1% | 87.5% |
| V | 17 | 1 | 14 | 1 | 13 | 1 | 2 | 3 | 4 | 6 | 5 | 4 | 47% | 57.1% | 87.5% |
| VI | 21 | 1 | 16 | 1 | 14 | 1 | 2 | 2 | 3 | 10 | 7 | 5 | 57.1% | 56.2% | 57.1% |
| VII | 9 | 0,5 | 21 | 1 | 16 | 1 | 1 | 2 | 2 | 2 | 10 | 6 | 33.3% | 57.1% | 50% |
| VIII | 9 | 1 | 8 | 1 | 21 | 1 | 1 | - | 2 | 2 | 3 | 10 | 33.3% | 37.5% | 57.1% |
| IX | 5 | 0,5 | 9 | 1 | 8 | 1 | 1 | 1 | - | 2 | 2 | 3 | 60% | 33.3% | 37.5% |
| X | 8 | 1 | 0 | 0 | 5 | 0,5 | 1 | - | 1 | 1 | - | 2 | 25% | - | 60% |
| XI | 4 | 0,5 | 8 | 0,5 | 0 | 0 | 1 | 1 | - | 1 | 1 | - | 50% | 25% | - |
| XII | 4 | 0,5 | 4 | 0,5 | 8 | 0,5 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 1 | 100% | 100% | 25% |
| ԸՆԴ | 125 | 10 | 130 | 10 | 135 | 10 | 20 | 20 | 23 | 40 | 44 | 52 | 60 | 65 | 75 |

Կրթության որակի ընդհանուր վերլուծությունը կատարվում է տարեկան առնվազն 2 անգամ՝ կիսամյակային ամփոփումից հետո: Կատարվում է վերլուծություն ըստ առարկաների, ընթացիկ ստուգումների, գնահատման և հետադարձ կապի միջոցով՝ համեմատելով նախորդ արդյունքների հետ:

Վերջին երեք տարիների ընթացքում դպրոցի աշակերտները չեն մասնակցել առարկայական օլիմպիադաներին : Չկան գերազանցության վկայական ստացած աշակերտներ:

2023-2024 ուս. տարում դպրոցում կոմպլեկտավորվել է10 դասարան 132 աշակերտ: Առկա է երկկոմպլեկտ դասարան, միավորվել են 10-րդ և 11-րդ դասարանները :

## 2023-2024 ՈՒՍ. ՏԱՐԻ

| ԴԱՍ | Աշակերտ թիվ | Դաս քանակ |
|---|---|---|
| I | 13 | 1 |
| II | 13 | 1 |
| III | 17 | 1 |
| IV | 10 | 1 |
| V | 7 | 1 |
| VI | 13 | 1 |
| VII | 14 | 1 |
| VIII | 15 | 1 |
| IX | 21 | 1 |
| X | 4 | 0,5 |
| XI | 5 | 0,5 |
| ԸՆԴ | 132 | 10 |

### 1.9 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծում

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Դպրոցում նախատեսվող խմբակները /առողջ ապրելակերպ, մասնագիտական կողմնորոշում/ նպաստում են աշակերտների սոցիալականացման և ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար:<br>Նախագծային աշխատանքի ներդրումը նպաստում է աշակերտների համար բազմակարծիք, մասնակցային միջավայրի ձևավորմանը:<br>Նախագծային մեթոդի հիմնական նպատակը սովորողների գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելն է` տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով:<br>Նախագծային մեթոդը հետազոտական ատեղծագործական մեթոդների համադրություն է :Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի , փորձագետի , խորհրդատուի դեր: Սա նշանակում է , որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների , սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու , տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու , քննադատական ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:<br>Դպրոցում ակտիվ աշխատանքներ են տարվում բազմազանության ճանաչման,երկխոսության խթանման, ինչպես նաև ներառման, հարգանքի և հանդուրժողականության մյուսի նկատմամբ և նրանց իրավունքի նկատմամբ , ոչ միայն | • ԿԱՊԿ ունեցող սովորողների համար խելամիտ հարմարեցումների բացակայություն<br>• Թեքահարթակների բացակայություն<br>• Հարմարեցված գույքի բացակայություն<br>• Նախագծային աշխատանքներ կատարելու ուղղությամբ պասիվություն<br>• Ծնողները ընդդիմանում են երեխաներին ներկայացնել կարիքի գնահատման |

| | |
|---|---|
| տարբերվել այլ նաև արտահայտել իրենց տարբերությունը:<br>Բազմակարծությունը նաև տարբեր հետաքրքրություններով , տեսակետներով , կենսակերպով , ծագմամբ և համոզմունքներով խմբերի խաղաղ համակեցությունն է :<br>Կատարվում է բուժքրոջ այցելություն դպրոց և կատարվում սովորողի ամենամյա բուժզննում, ինչը բխում է աշակերտի առողջական շահերի պաշտպանությունից:<br>Դպրոցում առկա է բազմակարծիք, համընդհանուր ներառական մասնակցային բարենպաստ կրթական միջավայր: | |

Դպրոցն ակտիվորեն համագործակցում է կառավարման խորհրդի հետ, որոշումներ կայացնելիս հաշվի առնում խորհրդի կարծիքներն ու առաջարկները:

Ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան դպրոցում ուսումնադաստիարակչական և ուսումնաօժանդակ աշխատանքները իրականացվում են պատշաճորեն, հաշվի են առնվում մանկավարժական , ծնողական , աշակերտական խորհուրդների կարծիքները որոշումներ կայացնելու և գործառություններ կատարելու ընթացքում

Դպրոցում ձևավորված է բարոյահոգեբանական արժեքային միջավայր, որտեղ կրթության գործընթացի մասնակիցները / ծնող, աշակերտ, մանկավարժ, կառավարման մարմին/ գործում են արդյունավետությունը:

Քննարկումների և տարաբնույթ միջոցառումների միջոցով պարբերաբար անդրադարձ է կատարվում վտանգավոր սովորություններին/ ալկոհոլ, ծխախոտ, թմրանյութեր, բուլինգ/, խտրականության, բռնության, հալածանքի, անձի թերագնահատման, վիրավորանք, անկախ սեռից, ազգությունից և այլ սովորական վիճակից. բոլորը հավասար են օրենքի առաջ, դարին բնորոշ խնդրահարույց հիվանդությունների վերաբերյալ, անպայման ներառելով հոգեբանին;

Հաստատությունում սովորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 1 աշակերտ , որի ուսուցումը կազմակերպվում է տնային ուսուցմամբ: Աշակերտը եղել է հատուկ դպրոցի սովորող:Աշխատանքները արդյունավետ է համագործակցելով ծնող- դպրոց- բազմամասնագիտական թիմ: Անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների դեպքում հնարավոր է երեխայի ուսուցումը կազմակերպել առկա ուսուցմամբ, ինչը ավելի արդյունավետ կդարձնի սովորողի ուսուցումն ու զարգացումը:

Ներառված աշակերտի համար կազմվում է ԱՈՒՊ , համագործակցելով ՏՄԱԿ-Ի հետ:

Ըստ կարիքի գնահատման վկայագրի սովորողը գնահատվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի `

- Ինտելեկտուալ `3-րդ աստիճան
- Շարժունակության` 3-րդ աստիճան
- Խոսքի և լեզվի` 4-րդ աստիճան

Մենք մեր առջև խնդիր ունենք դրած, ստեղծենք այն ապահով միջավայրը, որտեղ երեխաները ինքնադրսևորման, ինքնարտահայտման և իրենց պոտենցիալը լիարժեք ռեալիզացնելու հնարավորություն ունենան:

Դպրոցում գրեթե բացակայում են ԿԱՊԿ ունեցող սովորողների համար մատչելիությունը և խելամիտ հարմարեցումները: Ինչը խոչընդոտում է ԿԱՊԿ ունեցող սովորողի հաստատությունում առկա ուսուցում կազմակերպելու հարցում:

Համապատասխան պայմանների առկայության դեպքում, հատկապես թեքահարթակի ստեղծման պարագայում սովորողի ուսումնառությունը կկազմակերպվի դպրոցում:

Որոշ ծնողներ ընդդիմանում են իրենց երեխաներին ներկայացնել կարիքի գնահատման: Այստեղ բավական աշխատանք ունեն կատարելու բազմամասնագիտական թիմը: Կազմակերպել ծնողների հետ հանդիպումներ, քննարկումներ, խորհրդատվություններ, ծնողավարության դասընթացներ: Ցանկալի է ներկայացնել թիմի աշխատանքի ընթացքում ձեռք բերված հաջողությունները, սովորողների կողմից գրանցված հաջողությունները: Հնարավորության դեպքում ներառել նաև հաջողություն ունեցած երեխաների ծնողներին, ինչը ավելի համոզիչ ու ազդեցիկ կլինի:

## 1.10 Աշխատակազմի արժևորման , խրախուսման, ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Առկա պայմաններում դպրոցի տնօրինությունը անում է հնարավորը՝ մասնագետ մանկավարժներով դպրոցը ապահովելու գործում: Դպրոցում պաշտպանվում են ուսուցչի իրավունքները, արժևորվում նրա անցած ճանապարհը և առկա գործունեությունը: Դպրոցի տնօրինությունը հետևողական է ուսուցիչների ինքնակրթության, ինքնազարգացմանը: Մրցութային հիմունքներով մեկ ամիս առաջ ուսուցիչ է ընդունվել դպրոց որպես զինղեկ : Դպրոցի վարչատնտեսական մասի բոլոր աշխատակիցները համայնքի բնակիչներ են և նրանց ճնշող մեծամասնությունը դպրոցի աշակերտների ծնողներ են, որոնք սրտացավ վերաբերմունք են ցուցաբերում իրենց վստահված աշխատանքի հանդեպ: | .Ինքնակրթությամբ զբաղվելու պակաս .Արժևորման, խրախուսանքի պակաս |

Դպրոցում աշխատող մանկավարժները ամեն տարի անցնում են հերթական ատեստավորում 20%-ի չափով: 2022 թվականի ատեստավորվել է 6 մանկավարժ, 2023 թվականին ատեստավորվել է 6մանկավարժներ:

Դպրոցն ունի կամավոր ատեստավորում անցած երկու մանկավարժներ:

Դպրոցի 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների բոլոր ուսուցիչները վերապատրաստվել են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպած նոր չափորոշիչներին համապատասխան դասընթացներում:

Ֆինանսների սղության պատճառով մանկավարժները պարգևավճարներ չեն ստացել: Մանկավարժական օրինակելի աշխատանքի համար 4 ուսուցիչներ արժանացել են դպրոցի տնօրենի խրախուսանքի /շնորհակագիր, պատվոգիր/

Դպրոցը հնարավորինս փորձում է հնարավորություններ ստեղծել աշխատողների համար ինքնակրթությամբ զբաղվելու, որակավորումը բարելավելու, նոր չափորոշիչներին համապատասխան նախապատրաստվելու ուսումնական գործընթացին:

## Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի ֆինաասավորումը  պետբյուջեից կատարվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի ՝ կախված սովորողների թվից, իսկ 2023 թվականի սեպտեմբերից դասարան թվով: Իրատեսորեն գնահատելով դպրոցի հնարավորությունները ՝ ընթացիկ ծախսերը իրականացվելու են օրենսդրությամբ սահմանված կարգով, առաջնորդվելով << Գնումների մասին>> ՀՀ օրենքով:

**Բյուջեի ծախսի հիմնական ուղղություններն են.**

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
- Կոմունալ վճարներ
- Գրասենյակային և տնտեսական ապրանքներ
- Գույքի և սարքավորումների ձեռք բերման ծախսեր
- Մասնագիտական ծառայություններ
- Կապիտալ ծախսեր
- Կենցաղային և հանրային սննդի ծախսեր
- Պարտադիր ծախսեր
- Այլ ծախսեր

| | 2018-2019 | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|---|---|
| Ֆինանսական ցուցանիշներ | 33621.6 | 36927.5 | 43695.1 | 44333.7 | 44317.7 |

| | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|
| Բյուջե | 43695.1 | 44333.7 | 44317.7 |
| Ընդամենը ծախս | 43659.1 | 43944,0 | 42692,4 |
| Այդ թվում | | | |
| 1. Աշխատավարձ | 40441,1 | 39276,6 | 39621,0 |
| 2.Ընթացիկ ծախս | 3218,0 | 4667,4 | 3071,4 |
| 3. Գույքի ձեռք բերում | 0 | 0 | 0 |

Դպրոցի կարիքները հոգալու համար անհրաժեշտ է ներգրավել լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ բարեգործական աջակցություն, արտաբյուջեի ձևավորում, հովանավորներ, բարերարներ, շրջանավարտների խորհուրդ

Չնայած դպրոցում դասավանդած ուսուցիչներից շատերը տեղաբնակ չեն, բայց շնորհիվ կառավարության որոշման փոխհատուցվում է նրանց երթևեկության ճանապարհածախսը, որը շատ գովելի է և խթանիչ:

## 2.Նպատակների, խնդիրների սահմանում

| | Նպատակներ | Խնդիրներ |
|---|---|---|
| | Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան շենքային պայմանների ապահովում | • Ներքին հարդարման աշխատանքների իրականացում<br>• Թեքահարթակների կառուցում<br>• Բակի կանաչապատում, սպորտ հրապարակի բարեկարգում<br>• Միջանցքի սալիկապատման, դասասենյակների հատակի նորոգում<br>• Տիպային ճաշարան,խոհանոցի ստեղծում<br>• Հանդիսությունների դահլիճ ստեղծում<br>• Սանհանգույցների նորոգում, կոյուղագծերի անցկացում<br>• Դպրոցի շենքը համապատասխանեցնել ԿԱՊԿՈՒ սովորողների հարմարավետությանը |
| | Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան ֆիզիկական միջավայրի և նյութատեխնիկական բազայի ապահովում<br>Անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում | • Մարզագույքի, խոհանոցային գույքի համալրում<br>• Ուսումնական նյութեր, դիդակտիկ պարագաներ, անհրաժեշտ մեթոդական գրականության ապահովում<br>• Գրադարան՝ գեղարվեստական գրականությամբ և ուսումնական նյութերով հագեցվածության<br>• Գրապահարանների, աշխատասեղանների , համակարգչային սեղանների, աշակերտական սեղան աթոռների , կախիչներ՝ զգեստների համար նախատեսված գույքի ձեռք բերում<br>• Առարկայական կաբինետների, լաբորատորիաների նյութատեխնիկական բազայի հարստացում, համակարգիչների ,նոութբուքերի, պրոյեկտորի, բազմաֆունկցիոնալ տպիչ սարքերի ձեռք բերում<br>• ԿԱՊԿ ունեցող սովորողների համար խելամիտ հարմարեցումներ ապահովում |

| | | |
|---|---|---|
| | • Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացում<br>• Կառավարման խորհրդի դերի բարձրացումը դպրոցի հետ համագործակցության արդյունքում<br>• Մանկավարժական խորհրդի լիազորությունների գործնական կիրառում<br>• Ծնողական խորհրդի հետ համագործակցության բարելավում և դերի բարձրացում<br>• Աշակերտական խորհրդի գործունեության ակտիվացում , աշակերտական խորհրդի դերի կարևորում , սովորողների նախաձեռնության խթանում<br>• Ստեղծել հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդ | Կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների դերը դպրոցի կառավարման մեջ կարևորելը, նրանց գործունեության արդյունքում դպրոցի կառավարումը դարձնել ավելի արդյունավետ , տեսանելի և մասնակցային Հոգաբարձուների և շրջանավարտների խորհրդի ստեղծումը կնպաստի կրթական գործընթացի զարգացմանը աջակցմանը |
| | • Սովորողների սոցիալականցման ապահովում | Համագործակցել տարածքային կառավարման մարմինների, հասարակական /Հայկական կարիտաս, Վորլդ Վիժն և այլն/կազմակերպությունների, բնապահպանական ԾԻԳ-երի , հետ .Համագործակցել կրթական հաստատությունների հետ .Ձևավորել քաղաքացիական հասարակության ակտիվ քաղաքացի |
| | • Մանկավարժական համակազմի որակական բարելավում<br>• Սկսնակ ուսուցիչների աշխատանքի արդյունավետության բարձրացում | ՈՒսուցիչների ինքնազարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում .Խթանել, խրախուսել ուսուցիչների մասնակցությունը վերապատրաստումներին .Ապահովել փորձի փոխանակում սկսնակ և փորձառու ուսուցիչների միջև:<br>Բոլոր ուսուցիչները պետք է տիրապետեն առարկայական նոր չափորոշիչներին<br>Կատարել հաճախակի փոխադարձ դասալսումներ և քննարկումներ |

| | | |
|---|---|---|
| | Նպաստել դասապրոցեսում և դասապրոցեսից դուրս նորարարությունների , կրթական այլ տեխնոլոգիաների և ՏՀՏ կիրառությանը ուսումնադաստիարակչական գործընթացի զարգացմանը | Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում<br>.Ուսուցիչների ՏՀՏ որակների բարելավում<br>.Մեդիագրագիտության կարևորում ու զարգացում<br>. Սովորողների մոտ առաջացնել հետաքրքրություն նախագծային, ստեղծագործական, հետազոտական ինքնուրույն աշխատանք կատարելու ուղղությամբ<br>.Համակարգչային տեխնիկայի համալրում<br>.Սովորողների մոտ զարգացնել տեղեկատվական և հաղորդակցական կարողություններ |
| | Ապահովել Հանրակրթական նոր չափորոշչի պահանջը՝ սովորողների կոմպետեցիաների / կարողունակությունների վրա հիմնված կրթության մատուցում, որը պետք է սկսել ուսումնառության սկզբից և զարգացնել ավագ դպրոցում : Նշված ուսուցման հիմքում կձևավորվեն մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ և սոցիումին ինտեգրված քաղաքացիներ:<br><br>.Աշակերտների, դասարանների մրցակցային ուսուցման ապահովում<br><br>.Ուսուցման համար բարենպաստ պայմանների ապահովում, առողջության պահպանում<br><br>.Աշակերտներ առողջության և անվտանգ միջավայրի ստեղծում<br><br>.. Աշակերտների և աշխատողների մոտ ձևավորել սիրո և հոգատարության զգացում բնության և շրջապատի նկատմամբ | Կրթության որակի բարելավում, չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովում<br><br>.Կիրառել նոր գնահատման համակարգը, պահպանել օբյեկտիվություն<br><br><br>.Գործնական աշխատանքների ավելացում, նոր մեթոդների ներդրում<br><br>.Աշակերտներին մասնակից դարձնել առարկայական օլիմպիադաներին, տարբեր տեսակի մրցույթներին<br><br>.Բարեկարգ պահել դպրոցի շրջապատը, դասասենյակները, կաբինետները, մարզադահլիճը, հանդերձարանները, սանհանգույցները:<br><br>. Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ և արշավներ<br><br>Մարզական միջոցառումների մասնակցության ապահովում և խթանում<br>.<br>.Դասարանական , արտադասարանական , արտադպրոցական բազմաթիվ նպատակային միջոցառումների կազմակերպում և մասնակցության ապահովում<br><br>.Ուսուցման արդյունավետության բարձրացում<br><br>Կիրառել գնահատման նոր համակարգ |

| | | |
|---|---|---|
| | .Քաղաքացիական հասարակության և ակտիվ քաղաքացու ձևավորում .Դպրոցում բազմակարծիք , ներառական, մասնակցային արժեքային միջավայրի շարունակական կատարելագործում | • Զարգացնել յուրաքանչյուր սովորողի ներուժը համատեղ գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու և նպատակին հասանելու համար |
| | Աշխատակազմի արժևորման, խրախուսման, և ինքնակրթության հնարավորությունների նոր գործիքների կիրառում | • Կատարել մանկավարժների աշխատանքի որակի գնահատման ուսումնասիրություն և վերլուծություն<br>• Մշակել աշխատակազմի խրախուսման ձևեր, մեթոդներ |

## 3. Ուսումնական հաստատության գործունեություն

### 3.1 Կրթական կարիքների նկարագրություն

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպման հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է , որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը:

Դպրոցի գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

Ուսումնական հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության , մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման վրա:

Ուսումնական հաստատության գործունեության հիմքում ընկած է որակյալ, մատչելի, տարրական, հիմնական և միջնակարգ կրթության ապահովումը:

Պետության և ազգի անվտանգության ապահովման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը:

Ուսումնական հաստատության նպատակն է առաջիկա 5 տարիներին մրցունակ դպրոց ունենալն է, որտեղ յուրաքանչյուր կրթական աստիճանի շրջանավարտի, այդ թվում ԿԱՊԿՈՒ-ի , ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները միտված կլինեն հանրակրթության պետական չափորոշիչների ապահովմանը: Մրցունակ դպրոց ձևավորելու համար պետք է յուրաքանչյուր սովորողի կարիքին համապատասխան անհրաժեշտ ուշադրություն ապահովել, ստեղծել պայմաններ, որ յուրաքանչյուր սովորող ինքնահաստատվի և դառնա հաջողակ և որակյալ մասնագետ:

Աշխատանքային շուկայում պահանջներին համապատասխան դառնալու համար պետք է որակյալ մասնագետներ: Դպրոցն այդտեղ պետք է ապահովի առջընթացը:

Դպրոցի առաքելությունն է ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորել համակողմանիորեն զարգացած,մասնագիտորեն կողմնորոշված, հայրենասեր, ազգային արժեքների կրող մրցունակ, մարդասիրական ոգով դաստիարակված կոմպետենտ քաղաքացիներ;

Այս ամենի հիմքում պետք է դրվի ազգային արժանապատվություն ունեցող հայ մարդու դաստիարակությունը, ով ճանաչում է , ընդունում և հարգանքով է վերաբերվում իր և ուրիշ ժողովուրդներին, նրանց հոգևոր և մշակութային արժեքներին:

Առաքելության իրականացման վրա էական ազդեցություն կարող են ունենալ արտաքին և ներքին գործոնները:

Արտաքին գործոնների թվին են պատկանում պետական կրթական քաղաքականության առանձնահատկությունները, պոտենցիալ շահառուների կրթական կարիքները, տեղական առանձնահատկությունները և այլն: Ներքին գործոններից են դպրոցի ավանդույթները, մանկավարժական կոլեկտիվի փորձը, դպրոցի առկա ռեսուրսները և այլն:

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով:

ա. հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան սովորողի ուսուցումն ու դաստիարակությունը կազմակերպել դասապրոցեսների /ուսումնական նախագծերի և ուսումնական խմբակների /նպատակային ժամանակակից մանկավարժական մոտեցումներով:

բ. յուրաքանչյուր սովորողի համար անկախ ազգությունից, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքից և այլ առանձնահատկություններից կրթության հավասար իրավունքով համընդհանուր ներառական կրթության կազմակերպում մանկավարժական նպատակային մոտեցումներով

գ .ժամանակակից կրթական ծրագրերի ներդնում՝ հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան, որոնք կնպաստեն սովորողների կարողունակությունների ձեռք բերմանը

դ նպատակային և հասցեական մոտեցում յուրաքանչյուր սովորողի համար

ե. գնահատման ռազմավարական համակարգերի ներդրում՝ գնահատելու կատարված աշխատանքների արդյունավետությունը յուրաքանչյուր սովորողի համար

Հաստատության գործունեությունը համապատասխանում է կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին:

Լիարժեք գործունեության համար պետք է նպաստել սովորողի մոտ մարդասիրական, ազգային, համամարդկային արժեքների ձևավորմանը, սերմանել արժանապատվություն, հայրենասիրություն, պատասխանատվություն, հանդուրժողականություն, զարգացնել բնապահպանական աշխարհայացքի ձևավորում: Ուսուցողական միջավայրը պետք է լինի անվտանգ, հիգիենիկ, հետաքրքիր, գեղագիտական:

Ուսումնական հաստատության գործունեությունը ուղղված է սովորողների կարիքների բավարարմանը և իրականացվում է տարբեր ուղղություններով՝ ըստ կրթական մակարդակների:

Կրթական կարիքների նկատմամբ **մանկավարժական** մոտեցման էությունը հետևյալն է.

- Կրթական գործընթացի հիմնական առարկաների/դասավանդման և ուսուցման/ հետ կապված կրթական կարիքների ուսումնասիրման անհրաժեշտությունը
- Կրթական գործընթացի բոլոր առարկաների կրթական կարիքների ձևավորման և բավարարման համար մանկավարժական պայմանների մշակման անհրաժեշտությունը:
Խնդրի մանկավարժական ուսումնասիրությունը շատ արժեքավոր նյութ է տալիս կրթության հետագա բարեփոխման համար, քանի որ այն շարունակելուց առաջ անհրաժեշտ է իմանալ կրթական գործընթացում ընդգրկված սոցիալական համայնքների կարիքները և միայն դրա հիման վրա կատարել դրանում անհրաժեշտ վերափոխումները
**Հաստատության կառավարումն** ուղղված է սովորողների կրթական կարիքների բացահայտմանն ու նկարագրմանը,դրանց բավարարմանն ուղղված գործողությունների մշակմանն ու արդյունավետ իրագործմանը;
Կրթական կարիքների բավարարման համար ժամանակակից դպրոցից պահանջվում է կատարել մի շարք կառավարչական աշխատանքներ

- Ժամանակակից դասավանդման մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող բարձր մասնագիտական որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական կազմի ապահովում և համալրում
- Ուսուցիչների վերապատրաստման, մասնագիտական առաջխաղացման և խրախուսման հնարավորությունների ընդլայնում
- Ուսուցիչների վերապատրաստումների արդյունավետության մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների մշակում ու ներդրում
- Մոտիվացված անձնակազմ ունենալու համար խրախուսման միջոցառումների կազմակերպում
- Էլեկտրոնային ուսումնական նյութերի , պաշարների և ուսումնական գրականության որակական բարելավում
- Դպրոցի հիմնախնդիրների վերհանում և դրանք վերացնող նպատակների կազմում և իրականացում
- Համագործակցային միջավայրի ստեղծում դպրոցի և կառավարման ու խորհրդակցական մարմինների, համայնքի և այլ շահառուների հետ
- Դպրոց համայնք, դպրոց-ընտանիք, դպրոց-աշակերտ կապերի ամրապնդում
- Ներդպրոցական վերահսկողության միջոցների, ներքին կարգապահական կանոնների ներդրում
- Համընդհանուր դրական միջավայրի , արժեքային համակարգի և ավանդույթների ձևավորում

**Ուսումնադաստիարակչական աշխատանքները** հանդիսանում են սովորողների կրթական կարիքների բավարարման բուն գործընթացները, իրականացվում են ուսուցչամանկավարժական անձնակազմի կողմից ՝ ընդգրկելով ինչպես բուն ուսումնական և դաստիարակության գործընթացները, այնպես էլ դպրոցական և արտադպրոցական տարաբնույթ աշխատանքներն ու միջոցառումները:
Կրթական կարիքների բավարարման համար դպրոցը իր գործունեությամբ պետք է կատարի հետևյալ ուսումնադաստիարակչական աշխատանքները

- Աշակերտների կրթական կարիքների գնահատում, ըստ նրանց կարիքների բավարարման տարբերակված ուսուցում կազմակերպելուն
- Ձևավորել սովորողի շարունակական կրթությունն ապահովող անձնային որակներ
- Սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ
- Կրթության մեջ առաջնահերթություն տալ ուսուցման պրակտիկ ուղղվածությանը, սովորողը կարողանա ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները գործնականում կրառել
- Երաշխավորել սովորողների ազատությունը՝ որպես կրթության արդյունավետության բարձրացման միջոցի սովորողին պետք է ընձեռել ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորություն
- Ստեղծել պայմաններ ուսումնահետազոտական գործունեության համար
- Ուսումնառության ընթացքում զարգացնել ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողություն
- Նպաստել սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը
- Հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները
- Կազմակերպել սովորողների խորացված հոսքային ուսուցումը սովորողի նախասիրություններին և կարողություններին համապատասխան
- Չափորոշիչներին համապատասխան և համընդհանուր ներառական կրթության կազմակերպում
- Ուսուցման նորարարական մոտեցումների, նոր առավել արդյունավետ ուղղությունների ներդրում կրթության որակը շարունակաբար բարելավելու համար

**Վարչատնտեսական գործունեությունը** պլանավորվում է դպրոցի հնարավորությունների օբյեկտիվ գնահատման արդյունքում, այն ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջավայրի ապահովմանն ու զարգացմանը;

- Ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում
- Ուսուցումը խթանող, գրավիչ , ապահով և անվտանգ, բազմաֆունկցիոնալ ֆիզիկական և ժամանակակից թվային տեխնոլոգիաներով հագեցած համագործակցային միջավայրի ստեղծում՝ հաշվի առնելով կրթության զարգացող մեթոդաբանությունը, անվտանգության և համընդհանուր մատչելիության չափանիշները
- Ուսումնական հաստատությունների ուսումնական գույքի , ժամանակակից համակարգչային սարքավորումների շարունակական արդիականացում, համացանցի որակյալ հասանելիության ապահովում
- Ժամանակակից հետազոտական ենթակառուցվածքների , մարզադահլիճների , լաբորատորիաների և գրադարանների , նորարարական ոճով կահավորված անհատական և թիմային տարածքների ստեղծում
- Սովորողների սննդի կազմակերպում
- Արտադասարանական խմբակների և դասընթացների ծավալների ընդլայնում
- Զարգացման ծրագրի իրականացման վերահսկողություն

**ԿԱՊԿ ունեցող սովորողների** հետ աշխատանքներն իրականացվում են դպրոցի մանկավարժների, ուսուցչի օգնականի և ծնողների գործուն ներգրավվածությունը, Արթիկի ՏՄԱԿ-ի հետ համագործակցությամբ: Ներգործուն և նպատակային գործունեություն է իրականացվում ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ:

Մանկավարժական աշխատող –սովորող փոխհարաբերությունները հիմնված են փոխադարձ հարգանքի վրա: Դասղեկների հետևողական աշխատանքների շնորհիվ դասարաններում ձևավորվում է բարենպաստ մթնոլորտ, մանկավարժները հարգում են սովորողի մտքի, խղճի ազատությունը, պատշաճ ուշադրություն են դարձնում նրանց արտահայտած կարծիքներին ու հայացքներին, սովորողները իրազեկված են հաստատության կողմից սահմանվ ած ներքին կարգապահական կանոններին, իրենց իրավունքներին և պարտականություններին, որոնց հետևողական աջակցումը և ուղղորդումը շարունակաբար իրականացնում են դպրոցի դասղեկները, հոգեբանը, ուսուցչի օգնականը, հատուկ մանկավարժը, ՄԿԱ գծով տեղակալը, ԴԱԿ-ը:

Տարբեր տարիքային խմբերին համապատասխան յուրաքանչյուր ուսումնական շաբաթ դասղեկի ժամ է իրականացվում հաստատությունում՝ տարբեր թեմաներով,դրանք ուղղված են սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում, ինչպես նաև մեդիա աշխարհում ճիշտ կողմնորոշվելու : Այս հետևողական աշխատանքի պատճառահետևանքային կապն էլ այն է, որ դպրոցում բացառվեն հալածանքի , օտարման և բռնության դրսևորումները: Մանկավարժական աշխատող- գործընկերներ , մանկավարժական աշխատող- ծնողական համայնք փոխհարաբերությունները , հաստատության վարքականոնի կենսագործումն իրականացվում է հասարակական կարծիքի զուգակցման ու համագործակցման միջոցով:

Ուսումնական հաստատության տարրական դասարանների սովորողների հաճախելիության բարձրացման ու համընդհանուր տարրական կրթություն ձեռք բերման նպատակով իրականացվում է տաք սննդի ամենօրյա տրամադրում: Դպրոցն ընդգրկված է 2014 թ-ից Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացնող << Կայուն դպրոցական սնունդ>> ծրագրում:

Դպրոցում ձևավորվել և գործում են <<Առողջ ապրելակերպ>>, << Մասնագիտական կողմնորոշում>>, <<Ընթերցանություն>>, <<Հայկական լեռնաշխարհ>>, <<Հայի բնօրրան>> խմբակներ, որի վերահսկողությունը իրականացնում է ՄԿԱ գծով տեղակալը:

Նախագծային աշխատանքներ կիրականացվեն 7-12-րդ դասարաններում, որի համար ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչից նախագծի համար տրամադրվում է տարիֆիկացված

ժամաքանակ, նախագծի իրականացումը կվերահսկի դպրոցի տնօրենի ուսումնական աշխատանքների տնօրենի տեղակալը: Իրականացվելու է <<Բնության ազդեցությունը մարդու վրա >> թեմայով նախագծային աշխատանք:

Երկարօրյա ուսուցման աշխատանքները ընթացքի մեջ են:

## 3.2. Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին

ՀՀ Շիրակի մարզի <<Հառիճի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպվում է պետության կրթական քաղաքականության միտումներին համապատասխան:

Ըստ զարգացման ծրագրի դպրոցի կրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր ,ֆիզիկականև սոցիալական զարգացմանը, նրա անձի ՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության, ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը, համակողմանիորեն զարգացած քաղաքացու ձևավորմանը:

Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության պետական չափորոշիչով սահմանված արդյունքների ապահովումն է :

Դպրոցը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համագործակցում է համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը, որը համապատասխանում է շահառու խմբերի/ ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ, համայնք/ դրական արդյունքների ձեռք բերմանը, աջակցում համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը/ համատեղ շաբաթօրյակներ, ծառատունկ, հանդիպումներ, էքսկուրսիաներ, տոնակատարություններ/: Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին:

Սովորողները հանդիպումներ, քննարկումներ պետք է ունենան համայնքի ներկայացուցիչների, քաղաքացիների հետ, որի արդյունքում կիրականացվեն տարբեր նախագծային աշխատանքներ՝ միտված համայնքի զարգացմանը և կարիքների հետազոտմանը:

Կատարվելու է նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հաշվառում և ընդգրկում ուսումնական հաստատություն:

Դպրոցը իր գործունեությունը ծավալելու ընթացքում սերտ համագործակցում է համայնքի , ծնողների , մանկավարժների և աշակերտների հետ և ինչ-որ կարևոր որոշում կայացնելիս հաշվի է առնվում յուրաքանչյուր շահառուի կարծիքը:

Այսօր գիտելիքը ամենուր է: Կան գիտելիք ստանալու բազմաթիվ աղբյուրներ և հնարավորություններ: Հետևաբար՝ դպրոցը գիտելիք փոխանցելու աղբյուրներից ընդամենը մեկն է: Եվ որպեսզի աշակերտները ցանկանան դպրոցից գիտելիք ստանալ, ուսուցիչը պետք է լինի հետաքրքիր մարդ, ունենա սովորեցնելու, սովորելու,լսելու և հասկանալու հմտություններ: Մերօրյա դպրոցի հենասյուները պետք է լինեն **արհեստավարժ ուսուցիչները**: Ուսուցիչը շատ կարևոր դեր ունի ուսուցման գործում, սակայն գործընթացի կենտրոնում պետք է լինի **սովորողը**: Ուսուցիչը պետք է կարողանա դասարանում ստեղծել հրապուրիչ ուսումնական միջավայր, որտեղ յուրաքանչյուր սովորող ազատ և անկաշկանդ կդրսևորի իր առավելագույն ներուժը՝ անկախ իր հնարավորություններից:

Կարևոր է նշել նաև, որ դպրոցի տնօրենի աշխատանքում կան որոշակմարտահրավերներ,քանի որ այսօրեական ուսուցիչները պետք է կերտեն ուսումնառության նոր ուղիներ՝ առաջնորդելով ուսումնական գործընթացը:

Դպրոցի գործունեության ձևավորման համար հաշվի են առնվել դպրոցի մանկավարժների, սովորողների և ծնողների կարծիքները:

### Ծնողական համայնքի հետ

- Ծնողական ժողովների, ծնողխորհուրդների կազմակերպում՝ ըստ կարգի
- Կազմակերպել միջոցառումներ,սեմինարներ հոգեբանների, մանկավարժների հաղորդմամբ՝ ծնող-դպրոց փոխհարաբերության ակտիվ, օգտակար, նպատակային լինելու մասին
  Հաստատություն հաճախող սովորողների ծնողներն ուշադիր են և հետևողական, սովորողները հաճախում են խնամված, անհրաժեշտ գրենական պիտույքներով և դասագրքերով, տնային հանձնարարությունները կատարած:

### Կառավարման և ղեկավարման մարմինների հետ

- Տեղեկացված լինել և կիրառել Կառավարության և ԿԳՄՍ նախարարության կողմից տրվող գործող օրենքները, հրամաններն, կարգերը
- Համագործակցել և ապահովել ուսուցիչների և աշակերտների տեղեկացվածությունը և մասնակցությունը «ԿԶՆԱԿ» հիմնադրամի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին, մրցույթներին, նոր ծրագրերին
- Ակտիվություն դրսևորել լիազոր մարմնի հրահանգների, կարգադրությունների կատարման գործում՝ հետևելով պետության կրթական քաղաքականության միտումներին

### Համայնքի հասարակության ակտիվ խմբերի հետ

- Կազմակերպել հանդիպումներ, լսումներ տեղական ինքնակառավարման աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների, երիտասարդ մասնագետների, ակտիվ շրջանավարտների հետ
- Նպաստել անձնակազմի, մանկավարժների և աշակերտների շրջանում համայնքային կառավարման, խնդիրների վերհանման, համայնքային ծրագրերի մշակման, իրագործման և վերահսկման գիտելիք և հմտություն ձեռք բերելուն
- դաստիարակել համայնքային և ժողովրդավարական առաջադեմ գաղափարներ ու մոտեցումներ ունեցող սովորողներ , որոնք իրենց սովորածը կկիրառեն ոչ միայն իրենց կյանքում, այլ նաև համայնքին նպաստ բերող նախաձեռնություններում:
- Մարզային և համայնքային գրադարանի հետ կազմակերպվել են գրքերի քննարկումներ
- Բնակավայրի բուժհաստատության հետ՝ բժշկի և բուժքույրերի կողմից ավագ դասարանների սովորողների հետ սովորողների և նրանց ծնողների հետ իրականացվել են զրույցներ երեխաների ճիշտ ռեժիմի, առողջ սննդակարգի և ապրելակերպի, վնասակար սովորությունների մասին:
- ՈՒսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման հարցում համայնքն ունեցել է ներդրումներ:
- Դպրոցի սովորողները մասնակից են եղել համայնքի կողմից բնակիչների համար կազմակերպված միջոցառումներին /Անկախության տոնին, Հայոց բանակի տոնին նվիրված միջոցառմանը, Ծանրոց զինվորին, Խնկարկում Եղեռնի զոհերի հիշատակին/:
  Դպրոցի, ընտանիքի և համայնքի մասնակցութունը համարվում է հաստատության գործունեության բարելավման կարևոր գործոն: Մասնակցության բարձրացման կարևոր գործոններից է դպրոցի կողմից իրականացված քայլերը, որոնք ուղղված են հաստատության , տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև համայնքային այլ կառույցների հետ համագործակցության ամրապնդմանը:

## 3.3 Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին

Դպրոցը չունի հանդիսությունների դահլիճ, անհրաժեշտության դեպքում օգտվում են հարամարեցված տարածքից:

ՈՒնի տնօրենի աշխատասենյակ, 1 ուսուցչանոց, 1 համակարգչային դասասենյակ, 1 լաբորատորիա, 1 ՆԶՊ առարկայի դասասենյակ, 44-օրյա պատերազմում զոհված դպրոցի սաների անուններով անվանակոչված 2 դասասենյակ, բեմ միջանցքում, 1 մարզադահլիճ, որը չափերով չի համապատասխանում սահմանված նորմերին, ունի վերանորոգման կարիք, 2 հանդերձարան/տղաներ և աղջիկներ/ չկան առանձնացված լվացարաններ, սպորտհրապարակ, <<Արմաթ>> լաբորատորիա, 4 սանհանգույցներ, որից 2-ը գործում է, 2-ը `ոչ, ունեն վերանորոգման կարիք: Գրադարան, ճաշարան , պահեստ, արհեստանոց, 1 առանձնացված սենյակ կաթսաների համար նախատեսված, ինտերնետ կապի առկայություն, գործում է հրդեհաազդարարման համակարգ:

Դպրոցը չունի լաբորատորիաներ, անհրաժեշտ պարագաներ և նյութեր:

Առկա չեն ԲՏճՄ և մյուս առարկաներին վերաբերող համապատասխան դիդակտիկ պարագաներ, քարտեզներ և նյութեր:

Անմխիթար վիճակում է գտնվում դպրոցի արհեստանոցը: Դպրոցում առկա չեն առարկայական կաբինետներ:

Դպրոցում գործում է ճաշարան, հարմարեցված տարածքում, որտեղ սնվում են տարական դասարանի աշակերտները: Այսինքն դպրոցում իրականացվում է <<Դպրոցական տաք սնունդ ծրագիրը>>: Ճաշարանը չունի անհրաժեշտ բոլոր միջոցները անվտանգ սնունդ ապահովելու համար. նախատեսվում է պահանջվող չափորոշիչներին համապատասխան փոխել ճաշարանի սեղան աթոռները:

Դպրոցը չունի բուժկետ և բուժքույր ,որոնք անհրաժեշտություն են , երբեմն երբեմն ԲԿ-ի կողմից այցելում է համայնքի բուժքույրը:

Դպրոցն ունի գրադարան` ուսումնական գրքերով, ձեռնարկներով, գեղարվեստական գրականությամբ: Գրադարանն ունի տարածքի ընդարձակման և հարստացման կարիք:

Դպրոցում դասավանդած ուսուցիչներից շատերը տեղաբնակ չեն, բայց շնորհիվ կառավարության որոշման փոխհատուցվում է նրանց երթևեկության ճանապարհածախսը, որը շատ գովելի է և խթանիչ:

| N | 23.06.2023-ի դրությամբ | |
|---|---|---|
| 1 | Ուսուցիչների ընդհանուր թիվը | 21 |
| 2 | Վարչական աշխատողներ | 3 |
| 3 | Սովորողների թիվ | 132 |
| 4 | Բարձրագույն կրթությամբ ուսուցիչներ | 19 |
| 5 | Տարակարգ ունեցող ուսուցիչներ | 0 |
| 6 | Կամավոր ատեստավորված ուսուցիչներ | 1 |
| 7 | Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ | 1 |
| 8 | Ուսուցիչ – սովորող փոխհարաբերություն | 6 |
| 9 | Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածություն | 16 |
| 10 | Առարկայական մեթոդ միավորում | 2 |
| 11 | Ուսումնաօժանդակ անձնակազմ | |
| 12 | Հաշվապահ | 1 |
| 13 | Օպերատոր | 1 |
| 14 | Գործավար | 1 |
| 15 | Գրադարանավար | 1 |

## Հաստիքացուցակ

| Հ/Հ | Հաստիքների անվանում | Հաստիքների միավորների քանակ |
|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 |
| 2 | Վարչատնտեսական մասի համակարգող | 1 |
| 3 | Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ | 0,75 |
| 4 | Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով համակարգող | 0.75 |
| 5 | Գլխավոր հաշվապահ | 1 |
| 6 | Ձինղեկ | 1 |
| 7 | Քաղպաշտպանություն | 0.5 |
| 8 | Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ | 0.75 |
| 9 | Գրադարանավար | 1,0 |
| 10 | Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ | 0.75 |
| 11 | Ուսուցչի օգնական | 1,0 |
| 12 | Լաբորանտ | 0.25 |
| 13 | Ընթացիկ վերանորոգման բանվոր | 0.75 |
| 14 | Հավաքարար | 2 |
| 15 | Պահակ(ցերեկային) | 2 |
| 16 | Պահակ(գիշերային) | 2 |
| 17 | Հնոցապահ | 0.5 |
| 18 | Այգեպան | 0,5 |
| 19 | Հոգեբան | 0,75 |
| 20 | Անձնակազմի կառավարման մասնագետ | 1 |

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻ ԿԱԶՄ

| | |
|---|---|
| Մինչև 30 տարեկան | 1 |
| 31-40 տարեկան | 6 |
| 41-50 տարեկան | 6 |
| 51-60 տարեկան | 3 |
| 61 և ավելի | 6 |

## 4-5. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումը ապահովող գործողություններ, միջոցառումներ և պատասխանատուներ

| Միջոցառում գործողություն | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Պատասխանատուներ |
|---|---|---|---|
| **Կառավարման խորհուրդ**<br>Լիազորությունների ընդլայնում հետևյալ ուղղություններով<br>.Ներկայացնել կրթության կառավարման լիազորված մարմնի առաջարկությունները զարգացման ծրագրի վերաբերյալ<br>.նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդլայնում<br>.խորհրդի անդամների մասնակցությությունը դպրոցի կրթական ծրագրերին , միջոցառումներին , ներքին գնահատման աշխատանքներին<br>.մյուս խորհուրդների հետ սերտ համագործակցության ապահովում<br>**Ծնողական խորհուրդ**<br>.խորհրդի անդամներին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում<br>.ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդման համար կազմակերպել սեմինարներ, հանդիպումներ<br>.կազմակերպել համատեղ ծնող- ուսուցիչ -աշակերտ քննարկումներ, միջոցառումներ<br>.ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում<br>.ծնող խորհրդի նիստում հանդես գալ առաջարկություններով, խթանել հետաքրքիր նախաձեռնությունների իրականացմանը | Առավել մասնակից դարձնել դպրոցի գործունեությանը | 2024-2025 ուստարի<br><br>2025-2026 ուստարի<br><br>2023-2028 ուստարի<br><br>2023-2028 ուստարի<br><br>2023-2028 ուստարի | Տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, կազմակերպիչ, դասղեկներ, կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, ծնողական խորհուրդ, շրջանավարտներ, համայնքի ներկայացուցիչներ, ձեռներեցներ, բարերարներ |

| | | | |
|---|---|---|---|
| **Աշակերտական խորհուրդ**<br>.ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը<br>.կազմակերպելմիջոցառումներ, հանդիպումներ, բանավեճեր , կլոր սեղաններ և մրցույթներ, որոնք նպատակաուղղված կլինեն ազատ մտածողության զարգացմանը, ինչպես նաև պատասխանատվության ձևավորմանը<br>.ամրապնդել ուսուցիչ-աշակերտ, ծնող-աշակերտ, համայնք-աշակերտ հարաբերությունները<br>.աշակերտական խորհրդի գործունեության հիմքում կարևորելով վարվելակերպի ձևավորումը շարունակել ակտիվ հասարակական անհատի կրթման , սեփական կարծիքների ազատ արտահայտման ուղղորդման ուղղությամբ կատարվող աշխատանքները<br>**Մանկավարժական խորհուրդ**<br>.խորհրդի լիազորությունների գործնական կիրառում<br>.ուսուցիչների աշխատանքների գնահատման և խրախուսման նոր գործիքների կիրառում<br>.ուսումնական պլանների, ծրագրերի և դասագրքերի համալիր ստեղծման գործընթացին ուսուցիչների ակտիվ մասնակցության ապահովում<br>.սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի առավել արդյունավետ աշխատակարգի մշակման և կիրառման ներդնում<br>.առաջավոր փորձի հիման վրա դպրոցի աշխատանքների ակտիվացում<br>.ուշադրության կենտրոնում պահել մանկավարժական խորհրդի ընդունած որոշումների ճիշտ և ժամանակին կատարումը | | 2023-2028 ուստարի<br><br>2023-2028 ուստարի | |

| | | | |
|---|---|---|---|
| **Շրջանավարտների խորհուրդ**<br>.ստեղծել շրջանավարտների խորհուրդ<br>.կրթական գործընթացի զարգացմանը աջակցելու գործում շրջանավարտների խորհրդի դերի կարևորում<br>.այդ խորհրդի կազմում ընդգրկել անհատ ձեռներեցների , դպրոցի գործունեության շահագրգիռ անձանց<br>.նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական միջոցների համալրմանը<br>**Հոգաբարձուների խորհուրդ**<br>.առաջիկա 5 տարիների ընթացքում ձևավորել հոգաբարձուների խորհուրդ<br>.կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, տեղական իշխանությունների ներկայացուցիչների, անհատ ձեռներեցների<br>.նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների ստեղծման , նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործընթացում<br>.հոգաբարձուների նպատակը պետք է լինի ներդրումներ և նվիրատվություններ ձեռք բերելը՝ այդ գործընթացում ներգրավել կամավորների | | | |
| .Անցկացնել հանդիպում ցերեկույթներ արվեստագետների, արհեստագործ վարպետների մշակութային գործիչների հետ<br>.Կազմակերպել այցելություններ մշակութային կենտրոններ<br>.Համագործակցել բուհերի հետ<br>.Կազմակերպել տարաբնույթ էքսկուրսիաներ հայաստանի պատմամշակութային վայրեր, այցելություններ թանգարաններ, ցուցասրահներ, թատրոններ | Մանրամասն ծանոթություն հեղինակների կյանքի պայմաններին և նրանց ստեղծագործությունն երին<br>Մշակութային կյանքի զարգացում | 2023-2028 ուստարի | Տնօրինություն, ԴԱԿ, ՄԿԱ, վարչատնտեսական համակարգող, դասղեկներ, մանկավարժներ, Ախ, Ծխ, ՀՈՍԿ-ի տնօրեն, քահանա Համայնքապետարան, կառավարման խորհուրդ |

| | | | |
|---|---|---|---|
| .Դաստիարակել կամավորության առաջնորդության մասնակցային արժեքներ կրող քաղաքացիներ<br>.Համայնքի հետ համատեղ ծրագրերի իրականացում, սովորողների և ծնողների մասնակցությամբ/ դպրոցի բակում պտղատու ծառերի տնկում, շաբաթօրյակներ և այլն/<br>.<<Հառիճի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի հետ կազմակերպել նկարչական , ձեռագործ իրերի ցուցահանդես վաճառք համայնքի և ծնողների ներգրավմամբ:<br>.Համագործակցելով Հառիճում գտնվող եկեղեցուն կից Հառիճի Թրբանճյան ընծայարանի հետ սովորողներին հաղորդակից դարձնել հոգևոր կյանքին և առաքելական եկեղեցու ավանդույթներին<br>.Պետության կողմից տրամադրած դպրոցական աբոնենտային համակարգի կիրառում, խթանելով դպրոց- մշակութային օջախ կապը, նպաստելով աշակերտների գեղարվեստական դաստիարակությանն ու գեղագիտական զարգացմանը | | | |
| .Մեթոդ -միավորումների հետ կազմել ուսուցիչների ինքնազարգացման պլանի օրինակելի նմուշ<br>.Վերապատրաստումներին մասնակցությունը կիրականացվի ըստ կարիքի<br>.Աջակցել <<Տարվա լավագույններ>> մրցույթին մասնակցելու համար<br>.Մանկավարժների ուսուցումն ու զարգացումը կազմակերպել ֆորմալ և ոչ ֆորմալ եղանակով<br>.Ուսուցիչների հետ քննարկել ՀՊՉ և տալ պարզաբանումներ նրանցից բխող բովանդակային , ծրագրային | .Դասն ավելի արդյունավետ կազմակերպում, նոր մեթոդների, տեխնոլոգիաների օգտագործում դասապրոցեսում, աշակերտների ակտիվացման և ձգտման ավելացում<br>.Սկսնակ ուսուցիչների ակտիվ ներգրավումը դասապրոցեսին, ինքնակրթության ձգտում, ժամանակակից մեթոդների | 2023-2028 ուստարի | Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների գծով, ԿԶՆԱԿ,վերապատրաստող կազմակերպություններ,մ/մ նախագահներ, մենթոր ուսուցիչներ, ՀՄԿ, ՏՄԱԿ |

| | | | |
|---|---|---|---|
| և մեթոդական փոփոխությունների մասին<br>.Նյութերով համալրել գրադարանը /առարկայական ծրագրեր, սիդիներ, դիդակտիկ պարագաներ, պաստառներ և այլն/<br>.Համակարգչային հատուկ դասընթացներ ուսուցիչների համար<br>.Մասնագիտական որակի և դասավանդման մեթոդների արդիականացում , մենթոր ուսուցիչների հետ հանդիպում<br>.Մանկավարժական առաջավոր փորձի ներդրում պրակտիկ աշխատանքում<br>.Սեմինարներ, վեբինարներ , ինքնակրթության, ինքնավերլուծության խթանում, դասավանդման որակների արդիականացում<br>.Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում դասապրոցեսում<br>.ՈՒսուցիչների ՏՀՏ որակների բարելավում<br>.Մեդիագրագիտության կարևորում ու զարգացում<br>.Աջակցել ուսուցիչներին տիրապետելու գնահատման համակարգին, կիրառել ուսուցանող գնահատում և գնահատման բնութագրիչները:<br>.Նպաստել համընդհանուր ներառական կրթության գործընթացում ուսուցիչների կատարելագործմանը, կարողունակությունների զարգացմանը | օգտագործում, կրթության որակի բարձրացում | 2024-2026 ուստարի<br><br>2024-2028 ուստարի | |
| .Համակարգչային տեխնիկայի համալրում | Դասը արդյունավետ կազմակերպելու | 2024-2026 ուստարի | Հիմնադիր, լիազոր մարմին, տնօրեն, |

| | | | |
|---|---|---|---|
| .Նորագույն տեխնոլոգիաների ներդրում դասապրոցեսում<br>.Անվտանգ համացանցի կանոնների պահպանում, վերահսկողության իրականացում դպրոցում<br>.Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան սովորողների մոտ զարգացնել նորի և նորարարության հանդեպ ճկունություն, գործողություններում հարմարվելու կարողություն<br>.Դպրոցում հեռավար կրթական ծառայությունների մատուցման, էլեկտրոնային պաշարներից օգտվելու, առցանց դասընթացներ կազմակերպելու համար<br>. Լուսաբանել և քննարկել e-draft.am կայքում դրված ակտերը | Ժամանակակից մեթոդների օգտագործում<br>ՏՀՏ -երի կիրառում դասի ընթացքում | 2023-2028 ուստարի | տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների գծով, մ/մ նախագահներ, վարչատնտեսական համակարգող, մենթոր ուսուցիչներ, ԿԶՆԱԿ, մանկավարժներ վերապատրաստող կազմակերպություններ, օպերատոր, ինֆորմատիկայի ուսուցիչ |
| • .Մշտադիտարկումներ<br>.Վերջնարդյունքների ապահովման դիտարկում<br>.Մնացորդային գիտելիքի ստուգում<br>.Հայտորոշիչ աշխատանքներ<br>.Նախագծային աշխատանքներ<br>.Սահմանված ժամանակացույցի համաձայն ամեն շաբաթյա լսումներ և հաղորդումներ կազմակերպել նոր կրթակարգի կիրառման վերաբերյալ<br>.Ամիսը մեկ անգամ վերլուծել արդյունքները<br>.Դաստիարակության և ուսման բովանդակությունն ապահովող անհրաժեշտ պայմանների ստեղծում<br>.Բարձր դասարաններում անցկացնել մասնագիտական կողմնորոշման թեմաներով զրույցներ<br>.Ծնողական , աշակերտական խորհուրդներին , դասարանական ժողովներին հրազեկել հանրակրթության | Ուսուցիչ- ծնող, ծնող-դպրոց կապի ամրապնդում,կրթության որակի բարձրացում, ուսուցիչների, ծնողների և աշակերտների պատասխանատվության բարձրացում<br>Աշակերտների մոտ հայրենիքի և պետականության հանդեպ պատասխանատվության և հարգանքի ամրապնդում, արվեստի կարևորության ընկալում<br>Աշակերտի մոտ առողջ ապրելակերպի , սպորտի կարևորության գնահատում, անվտանգության գիտակցում<br>Նոր հնարավորություններ | 2023-2028 ուստարի | ԿԳՄՍՆ, լիազոր մարմին,տնօրեն, տնօրենի տեղակալ,մ/մ նախագահ, դասղեկներ, մանկավարժական համակազմ, ՄԿԱ ԴԱԿ համայնք, ուսուցչի օգնական,ծնող, բազմամասնագիտական թիմ, զինղեկ,ֆիզկուլտուրայի ուսուցիչ, խմբակի ղեկավարներ |

| | | | |
|---|---|---|---|
| նոր չափորոշչով սահմանված գնահատման նոր կարգի մասին<br>.Դասղեկի ժամերին կազմակերպել քննարկումներ վատ սովորությունների, ազգային խտրականության նաև թմրամոլության , բռնարարքների , բուլինգի, ծխելու , դեռահասների կողմից ալկոհոլի օգտագործման թեմաներով: Կազմակերպել բաց դասեր , իրազեկիչ հանդիպումներ, որոնց ընթացքում աշակերտները մանրամասն կծանոթանան երևույթին: Դասղեկի ժամերին պարբերաբար անդրադառնալ վերոնշյալ խնդրահարույց երևույթներին, կարդալ նաև զեկուցումներ: Ցուցադրական նյութերի միջոցով իրազեկել և դատապարտել բոլոր վնասակար սովորությունները: Համագործակցել նաև ՏՄԱԿ-ի հետ, անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու մանկավարժական համակազմին:<br>.Հոգեբանի աջակցությունն ու խորհրդատվությունը ևս կարևոր է սովորողների հետ աշխատանքում, հատկապես վարքի խնդիրներ ունեցող սովորողների հետ:<br>.Ներդպրոցական արտադպրոցական միջոցառումների կազմակերպում<br>.Ռազմահայրենասիրական, մշակութային տարբեր միջոցառումների կազմակերպում<br>.Առողջ ապրելակերպի և սպորտի զարգացում դպրոցում<br>.Անհամեմատելի է ծնողի դերը արատավոր սովորությունների, բռնությունների կանխարգելման գործում: | աշակերտների մասնագիտական կողմնորոշման | | |

| | | | |
|---|---|---|---|
| .Գեղագիտական խմբակների հիմնում<br>. Ծնողական ժողովները չպետք է կրեն ձևական բնույթ: Անհրաժեշտ է ժողովներին իրազեկել նաև ծնողներին բուլինգի մասին, ներգրավելով հոգեբանին, մանրամասն խոսել, բացատրել, իրազեկել այս երևույթի մասին:<br>.Ծնողների հետ աշխատանքներ տանել համընդհանուր ներառման մասին,<br>.Հոգեբանի և ուսուցչի օգնականիաշխատանքի արդյունավետ աշխատանքի ապահովում<br>.Դասղեկ ծնող կապը հնարավորինս սերտ պահելով կխուսափենք սովորողների կողմից իրականացվող ցանկացած վատ սովորությունից<br>.Դժբախտ պատահարներից պաշտպանվելու երեխաների կարողությունների ձևավորման համար կազմակերպել կանխարգելիչ միջոցառումներ, ներգրավելով ՆԶՊ ուսուցչի, ԴԱԿ, դասղեկներ<br>.Բարձր դասարաններում իրականացնել մասնագիտական կողմնորոշման ուղղված զրույցներ: .Հնարավորության դեպքում այցելել տարբեր հիմնարկ ձեռնարկություններ, ծանոթանալով աշխատանքներին, ինչը կնպաստի սովորողի նախասիրությունների ձևավորմանը<br>.Դաստիարակչական աշխատանքներ հիմնված դասղեկական պլանների վրա<br>.Դպրոցի հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին հանդիպում քննարկումներ | | | |

| | | | |
|---|---|---|---|
| .Ներդպրոցական, արտադպրոցական միջոցառումների կազմակերպում<br>.ՈՒսումնադաստիարակչական գործընթացների ընդլայնում,ծնողների մասնակցության ընդլայնում, ծնողական ժողովներ<br>.Ռազմահայրենասիրական տարբեր միջոցառումների կազմակերպուՄ<br>.Կազմակերպել երկարօրյա ուսուցում ցածր առաջադիմություն ունեցող և ԿԱՊԿ ունեցող սովորողների համար<br>.Դպրոցում զարգացնել նախագծային աշխատանքներ կատարելու, հետազոտական աշխատանքներ իրականացնելու կարողունակությունը | | | |
| .Դպրոցում սահմանել վարքագծի նոր կանոններ, որի կազմմանը մասնակից դարձնել բոլոր շահագրգիռ կողմերին<br>.Կենտրոնում պահել դպրոցի բարոյահոգեբանական միջավայրը, մարդկային փոխհարաբերությունները<br>.Կատարելագործել համերաշխ, բազմակարծիք , ներառական , մասնակցային կրթական միջավայրը<br>.Կրթական բոլոր շահագրգիռ կողմերի համար ապահովել ազատ կարծիք արտահայտելու, հարցադրումներ անելու միջավայր<br>.Զարգացնել սովորողների թիմում աշխատելու , որոշումներ կայացնելու, ընդհանուր նպատակին հասնելու կարողունակություններ<br>. Աշխատանքներ տանել ԿԱՊԿ ունեցող սովորողի նկատմամբ հոգատարության, համդուրժողականության ուղղությամբ | Բազմակարծիք, մասնակցային անհատի ձևավորում | 2023-2024 ուստարի<br>2023-2028 ուստարի | Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, ԴԱԿ,ՄԿԱ, Ծխ,Ախ, բազմամասնագիտական թիմ, դասղեկներ, մանկավարժական համակազմ |

| | | | |
|---|---|---|---|
| .Մանկավարժների համար ստեղծել խրախուսման մեխանիզմներ .Գործածության մեջ դնել ինքնագնահատման թերթիկը, կատարել վերլուծություններ .Դպրոցի տեսանելի հատվածում ստեղծել աշխատակազմի խրախուսման նվաճումների, ձեռք բերումների անկյուն | Կբարձրանա աշխատանքի որակը | 2023-2028 ուստարի | Տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, մ/մ նախագահներ, վարչատնտեսական համակարգող, հաշվապահ, կառավարման խորհուրդ, ԴԱԿ,ՄԿԱ, Ծխ, Ախ |
| Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի անցում էլեկտրոնային փաթեթի | Դպրոցի գործունեության հասանելիություն և թափանցիկություն առցանց հարթակում: Դպրոցի փաստաթղթերի պահպանմանառավել հասանելի և ապահով տարբերակ, դպրոցի գործունեության թափանցիկության ապահովում | 2023-2028 ուստարի | Տնօրեն,Վարչատնտեսականհամակարգող Հաշվապահ Օպերատոր |
| Դպրոցի շենքը համապատասխանեցնել ԿԱՊԿՈՒ սովորողների հարմարավետությանը | Կարիքների հեշտ հաղթահարում | 2024-2026 ուստարի | Հիմնադիր, լիազոր մարմին,տնօրեն, վարչատնտեսական համակարգող, հաշվապահ, կառավարման խորհուրդ |
| Առարկայական կաբինետների, լաբորատորիաների նյութատեխնիկական բազայի հարստացում, համակարգիչների ,նոութբուքերի, պրոյեկտորի, բազմաֆունկցիոնալ տպիչ սարքերի ձեռք բերում | Գործնական և տեսական դասերի համախմբում | 2024-2028 ուստարի | Հիմնադիր, լիազոր մարմին,տնօրեն, վարչատնտեսական համակարգող, հաշվապահ, կառավարման խորհուրդ |
| Մարզադահլիճի բարեկարգում, մարզագույքի ձեռք բերում | Հետաքրքիր դասի կազմակերպում, սպորտի նկատմամբ հետաքրքրության աճ | 2024-2028 ուստարի | Հիմնադիր, լիազոր մարմին,տնօրեն, վարչատնտեսական համակարգող, հաշվապահ, կառավարման խորհուրդ |
| Կանաչ տարածքների բարեկարգում | Գեղագիտական ճաշակ | 2024-2025 ուստարի | Հիմնադիր, լիազոր մարմին,տնօրեն, վարչատնտեսական համակարգող, հաշվապահ, կառավարման խորհուրդ, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | տնտեսվար, ԱԽ, ԾԽ, մանկավարժական համակազմ |
| Ներքին հարդարնման աշխատանքների իրականացում Կոյուղագծերի անցկացում Միջանցքի սալիկապատում դասասենյակների հատակի նորոգում, Տիպային ճաշարանի,խոհանոցի վերանորոգում, սեղան աթոռների փոխարինում նորերով Հանդիսությունների դահլիճի ստեղծում Սանհանգույցների նորոգում | Հարմարավետ պայմանների ստեղծում | 2024-2028 ուստարի | Հիմնադիր, լիազոր մարմին,տնօրեն, վարչատնտեսական համակարգող, հաշվապահ, կառավարման խորհուրդ |
| .Ուսումնական նյութեր, դիդակտիկ պարագաներ, անհրաժեշտ մեթոդական գրականության ապահովում .Գրադարան՝ գեղարվեստական գրականությամբ և ուսումնական նյութերով հագեցվածության .Գրապահարանների, աշխատասեղանների , համակարգչային սեղանների, աշակերտական սեղան աթոռների , կախիչներ՝ զգեստների համար նախատեսված ձեռք բերում | Ուսման գործընթացը ավելի արդյունավետ դարձնել | 2024-2026 ուստարի<br><br>2024-2028 ուստարի | Հիմնադիր, լիազոր մարմին,տնօրեն, վարչատնտեսական համակարգող, հաշվապահ, կառավարման խորհուրդ |

## 6. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշներ

| N | Գնահատման ենթակա գործողության/միջոցառման ուղղությունը | 1 անբավարար | 2 վատ | 3 բավարար | 4 լավ | 5 գերազանց |
|---|---|---|---|---|---|---|
